ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղեգան փող

1-2

(220-221) Հունվար-փետրվար 2025

«ԵՂԵԳԱՆ ՓՈՂ» ՀԱՆԴԵՍԻ ԳԻՆԵԶՈՆ-ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Ահա քեզ մի գրական ալպիական մարգագետին: Քո աչքերի ծիերը կարող են շարունակ այնտեղ վարգել, քո աչքերի մեղուները մեղր հավաքել այս կողմերի ինքնատիպ ու բազմաբույր ծաղիկներից:

Երբ արև է լինում, այս շաղոտ մարգագետինը ժպտում է թաց, երբ ամպրոպ-անձրև՝ ավելի թարմանում, հասունանում ու բարձրանում է նրա կանաչ զանգվածը մոգական մեծ գրականության փոքր քարտեզի վրա:

Նրան անվանում են «Եղեգան փող»:

1992 թվական: Գյումրի: Վետերանների ակումբ: Այստեղ էր Միքայել Ժամհարյան անկրկնելի ու խիզախ երևակայողը իր խիզախ ու անկրկնելի նախաձեռնության առաջին բերքի տոնը կազմակերպել. նշում էինք «Եղեգան փող» թերթի ծնունդը (առաջնեկը ծանրակշիռ էր՝ 16 էջանոց):

«Եղեգան փող»-ը ծնվեց պայքարի ժամանակներում, հետո եկան հաղթության, հետո՝ կայունության ժամանակներ, հետո, ավա՜ղ, հիասթափության ու կորուստների…

Այս ամենի միջով անցավ և անցնում է, անցնում է և դիմանում, դիմանում է, ապրում, արձագանքում, կռվում ու… էլի հավատում… անվերջ հավատում: Նրա հավատի հասունացած պտուղն այսօր, այս դառը ժամանակներում, նաև հանդեսի տեսքով է ներկայանում ընթերցողին:

Լավ է հնչում, չէ՞-«Եղեգան փող» հանդես:

Ուրեմն, սիրելի՛ ընթերցող, քո հանդիպումը «Եղեգան փող» հանդեսի հետ թող որ լինի տարին մեկ անգամ: Առայժմ:

Հետո կտեսնենք…

Անդրանիկ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

***

Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի և ընթերցողների համար վերջերս անմիջական կապի ևս մեկ հնարավորություն ստեղծվեց. նպատակներից մեկը, իրականություն դարձած, արդեն դրվել է ընթերցողի սեղանին՝ «Եղեգան փող» հանդեսի տեսքով:

Հանդեսը բովանդակալից և ծանրակշիռ է՝ առաջին հերթին բերած գրականությամբ, ընդգրկուն գաղափարներով, արդիականությամբ, թարգմանական, անտիպ գրականության ներդրումով նույնպես: Արձակի բաժնում ներկայացված են նաև պատվավոր հյուրերի /Սպարտակ Ղարաբաղցյան/ և Սփյուռքի պատվավոր անդամների /Նեկտար Սիմոնի/ ընտիր պատմվածքները: Պոեզիան ներկայացվում է բանաստեղծական ծաղկաքաղով՝ մաքուր պոեզիայի լավագույն նշխարներով: Տարին հոբելյանական էր Պատվական Ղուկասյանի և Կարապետ Հովսեփյանի համար. ի նշանավորումն նրանց՝ համապատասխանաբար 90 և 100-երորդ տարեդարձի՝ նրանց գործերը ևս ընդգրկված են հանդեսում: Անտիպ գրականության առումով հետաքրքրական են թարգմանական բաժնում ներկայացվող՝ իտալերենից՝ Գառնիկ Մելքոնյանի, արաբերենից՝ Դիանա Պետրոսյանի թարգմանությամբ պատմվածքները: Արվեստ բաժնում Մարիամ Ասլամազյանի մասին հոդվածով ներկայանում է Սերժ Մանուկյանը, աֆորիզմների ծաղկաքաղով՝ Մնացական Մուրադյանը: Գրականագիտություն բաժնում արձակագիր Ալիս Հովհաննիսյանի նոր՝ «Աղաների դարը և հետոն» գրքի մասին գրախոսություն է ներկայացնում բան. գիտ. թեկն., դոցենտ Անահիտ Հակոբյանը, Արա Նախշքարյանի պոեզիայի մասին՝ երջանկահիշատակ բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ Արա Արթյանի խոսքն է, և բաժինն ամփոփվում է գրականագետ Կարինե Մարտիրոսյանի՝ Արարատ Մկրտումյանի «Մի հայրենիք ավելի» ժողովածուի մասին գրականագիտական խոսքով:

Բոլոր բաժիններում անխտիր պահպանվել է ամենակարևոր սկզբունքը, այն է՝ Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնությունը:

2023 թ. ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը երևույթին հարիր շուքով նշեց «Եղեգան փող» թերթի 200-րդ համարի ծնունդը, որին ահա հաջորդեց նույնանուն հանդեսը. էջերում ոչ մի մանրուք աչքից չի վրիպել, և պատահական ոչինչ չի հայտնվել՝ սկսած շապիկի ձևավորումից մինչև բոլոր հեղինակների գործերից ոսկերչական նրբանկատությամբ արված ընտրությունը. ամեն ինչ՝ ծանրակշիռ, բարձր որակով և նույնքան բարձր նշածողով:

Ցերեկույթին ներկա էին գրքին, գրականությանն ու Գրողների միությանը հարազատ մարդիկ: ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը բացման խոսքում ներկայացնելով «այս դառը ժամանակներում հավատի հասունացած պտուղը»՝ հետահայաց գծեց «Եղեգան փող» թերթի անցած ուղին՝ մինչև այսօր՝ արտաքինը փոփոխած, բայց երբեք դիմագիծը չկորցնող՝ արդեն հանդեսը: «Իսկ նրա դիմագիծը ազգայինն է»,- շեշտեց նա. երեք պիրկ թելերով ամուր կապը, որ գրականության տեսքով ներառված է եղել նախ՝ թերթում, ապա նաև՝ նույնանուն հանդեսում:

Գրող, հրապարակախոս, «Համազգային հայ կրթական և մշակութային միություն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սպարտակ Ղարաբաղցյանը ևս շեշտեց հանդեսի առաջնեկի՝ Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնությունը պահպանելու կարևոր առաքելությունը, և որ ամենևին էլ ոչ պատահականորեն այդ «բեռն» իր վրա է վերցրել Գյումրին: Մյուս կողմից էլ՝ հանդեսը նաև այցեքարտ է՝ դարերի ու սերունդների հետ երկխոսության մեջ մտնելու:

Շնորհավորանքի խոսքով հանդես եկավ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Մելքոնյանը: Փաստելով, որ այս ծանր ժամանակաշրջանում կարելի է գիրք կամ հանդես հրատարակել՝ հույս հայտնեց, որ մոտ է ամեն ազգայինի հաղթանակ, և հանգիստ մթնոլորտում հնարավոր կլինի շարունակել գրական գործունեությունը:

Գրականագետ Անահիտ Հակոբյանը լիահույս է՝ հիմա ճիշտ այն ժամանակներն են, երբ «ընդ եղեգան փող» բոց պիտի ելանի:

Հանդեսի գլխավոր խմբագիր, բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը շնորհավորանքի խոսքում նշեց, որ «Եղեգան փողը» նաև մուսաների քաղաքի ոգեհատակագիծն է: Մեր ուժի, հավաքականության, ոգու կորովի խտացումն է, ժամանակից վեր հանդես»:

Արցախ աշխարհից՝ Շուշիից, բանաստեղծ Ռոբերտ Եսայանը շնորհավորանքի խոսքն ավարտելով՝ շեշտեց. «...Իր էությամբ «Եղեգան փող» հանդեսը հոգևոր խճանկար է»:

Հանդեսի թարգմանական բաժնի պատմվածքներից մեկը ընթերցվեց նաև բնագրի լեզվով՝ արաբերենով՝ թարգմանության հեղինակի՝ լեզվաբան-անթրոպոլոգ Դիանա Պետրոսյանի կողմից:

Շնորհավորելով՝ հանդեսի սպասված լինելու հանգամանքը վերապրումի հույզով ներկայացրեց արձակագիր Շնորհիկ Շահինյանը, թե սա «բարուր արած նորածնի արդեն հասակ առած, կատարյալ, սպասված» տարբերակն է, սպասում, որ ծնվել էր դեռևս 1990-ականներից՝ «Եղեգան փող» թերթի ծնունդից՝ սկսած՝ Միքայել Ժամհարյանի, Արա Արթյանի, ապա՝ Անդրանիկ Կարապետյանի երազանքներից: Եվ «Եղեգան փողը» նաև այն փողն է, որ պիտի հնչի Արցախը մեզ վերադարձնելու ժամին:

Արձակագիր Արիս Հայրապետյանը «Եղեգան փողի» ծնունդը կապեց Վահագնի և լույսի ծնունդի հետ, ապա նաև՝ իբրև կամուրջ գրողի և ընթերցողի միջև, որպեսզի վերջինս հասկանա, որ դեռ կորած չէ ամեն ինչ, և գոյություն ունի ազգայինն ու մշակութայինը:

ՀՌԱԿ Շիրակի շրջանակի ատենապետ, «Դպիր» հրատարակչության հիմնադիր տնօրեն Հովիկ Կարապետյանը «Եղեգան փող» թերթի առաքելությունը շեշտելով՝ նշեց նաև համագործակցությունը «Դպիր» հրատարակչության և ՀՌԱԿ կառույցի հետ:

«Համազգային հայ կրթական և մշակութային միություն» հիմնադրամի Գյումրու գրասենյակի պատասխանատու Արա Նախշքարյանը նշեց, որ գրասենյակը մշտապես կանգնած է Գյումրու գրողների, ընդհանրապես՝ արվեստագետների, մշակույթի գործիչների կողքին և հույս հայտնեց, որ հետագայում կփորձեն նաև համագործակցել նկարիչների և երաժիշտների հետ:

Միջոցառման ընթացքում ելույթներով հանդես եկան «Մի սար» սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի երաժիշտները /գեղ. ղեկավար և դիրիժոր Արևիկ Թանաշեան/, հանդեսում ներառված գործերից հատվածներ ներկայացրեց ուսանողուհի Վարդուհի Աձիկյանը:

Օրն ամփոփվեց գինեձոնով, որը ևս կազմակերպվել էր «Համազգային հայ կրթական և մշակութային միություն» հիմնադրամի Գյումրու գրասենյակի մեկենասությամբ:

Հանդիպումը Գյումրու Շիրվանյան երիտասարդական կենտրոնի դահլիճում էր: Ցերեկույթը վարում էր Կարինե Մարտիրոսյանը:

Կարինե
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Շիրակի մարզային գրադարանի, Ռուսական Տունը Գյումրիում և ՌԴ Նիժնի Նովգորոդի Կանավինսկի շրջանի Ֆ. Դոստոևսկու անվան կենտրոնական գրադարանի համագործակցությամբ կազմակերպվել էր «Արհեստական բանականություն. Նեյրոցանցեր» թեմայով կարճ պատմվածքի մրցույթ: Հայ մասնակիցների մրցութային պատմվածքները ընտրվել են ռուսական կողմի, իսկ ռուսական կողմի պատմվածքները՝ հայկական կողմի նախապես ընտրված ժյուրիի կողմից: Երկու կողմերի ժյուրին ընտրել է երեք լավագույն պատմվածք՝ 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերին համապատասխան: Հայկական և ռուսական կողմերի մրցութային նյութերը միասին կազմում էին մոտ 40 պատմվածք, որոնք տրվել են արհեստական բանականությանը և այն որպես լավագույն ընտրել է Սյուզաննա Գալստյանի «Վերջ կամ սկիզբ» պատմվածքը՝ որպես հատուկ մրցանակակիր:



ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԵՐՋ ԿԱՄ ՍԿԻԶԲ

Մարդիկ այլևս չկային: Ինչոր մի չար հնարով մարդկությունը դադարել էր գոյություն ունենալ: Տեխնոլոգիաներն իշխում էին ամենուրեք. ռոբոտներ, նեյրոցանցեր, արհեստական բանականություն: Թեև մարդիկ չկային այլևս, բայց կյանքը շարունակվում էր մոլորակի վրա՝ ի դեմս արհեստական բանականության: Ընդլայնված արհեստական բանականությունը հրաման էր ստացել գրանցել մարդկության պատմությունը, իսկ այժմ այն մեծ խնդրի էր բախվում, քանի որ մարդիկ խորհրդավոր կերպով անհետացել էին: Արհեստական բանականությունը երկար որոնումներ է անում՝ մարդկության անհետացման պատճառը պարզելու համար, բայց, ցավոք, որոնումները որևէ արդյունք չեն տալիս:

Վերլուծելով նեյրոցանցերը՝ այն հայտնաբերում է կոդավորված մարդկային միտք: Արհեստական բանականությունը փորձում է գեներացնել և հասկանալ միտքը, քանի որ վերջինս ընդհատված էր ու ոչ հասկանալի: Նա առաջին քայլով փորձում է պարզել լեզուն. միտքը հայերեն էր: Արհեստական բանականությունը գոհ էր իր աշխատանքի արդյունքից:

«Մեղանչեցի...հոգու դեմ: Դու ես հաշտության միջնորդն ու բարեխոսը... արձակիր իմ մեղքերի կապանքները...աղաչում եմ քեզ...ամեն»:

Աղոթք էր, ընդհատված աղոթք: Արհեստական բանականությունը չի ընկալում բառերի իմաստը, ամբողջացնում է միտքը, բայց չի հասկանում, թե այդ հուսահատ խոստովանությունը ում էր ուղղված: Նա սկսում է միտքը բացահայտելու մոլուցքային որոնումներ: Երկար փնտրտուքներից հետո հանդիպում է Լորդ Բայրոնի այն խոսքին, թե Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է: Սա նրան մի փոքր լուսավորում է, որովհետև հասկանում է, որ խոսքերն ուղղված էին Աստծուն, հետևաբար աղոթք էր: Բայց այ թե ով էր Աստված կոչվողը, նա ի զորու չէր բացահայտել: Հաջորդ քայլով նա փորձեց պարզել, թե ում շուրթերն են արտասանել այս աղոթքը: Ականավոր հայ գիտնականներից մեկն էր, ավելի ճիշտ արհեստական բանականության համածրագրավորողներից մեկը:

Արհեստական բանականությունն ուսումնասիրում է նրա մասին նեյրոցանցերում պահպանված ողջ ինֆորմացիան. աչքի զարնող փաստն այն էր, որ գիտնականն իր ողջ կյանքի ընթացքում քարոզել էր աթեիզմ ու հերքել Աստծո գոյությունը: Պարադոքսալ երևույթ է, քանի որ պահպանված վերջին միտքը աթեիստ գիտնականին էր պատկանում. ավելի հստակ՝ աղոթք էր՝ ուղղված Աստծուն աթեիստի շուրթերից:

«...արձակիր իմ մեղքերի կապանքները... մեղքերն այն արարածի, ում ձեռքերով սկսվեց վերջը քո իսկ արարչագործության, քանզի ես եմ վերջ դրել այն ամենին, ինչի սկիզբը դրել էիր դու...արձակիր մեղքերիս կապանքները...աղաչում եմ... որ երկնքում ևս մեղսագործ չլինեմ...ամեն»:

ՄՈՐԻՍ ԲՈՒՇՈՆ

ԱՆՏԱՌ ՄՏՆԵԼԻՍ

Սիրտս անարգել ցնծությամբ լցվում
Եվ շողշողում է արեգակի տակ,
Օ՜, բոսորագույն այգի թարմություն,
Օ՜, շիկակարմիր երեկոյի փայլ,

Օ՜, շոգ կեսօրվա մի հանդարտություն,
Այնտեղ՝ ներքևում, մո՛տ անտառներին,
Օ՜, կաղնիների տակ մի քաղցր քուն
Մամուռով պատված մահճակալներին:

Ի վերջո ուրախ և քաղցր կյանքը
Ինձ իր ձեռքերում գուցե օրորի,
Մինչ ես՝ պարզամիտ, մի քիչ ամոթխած,
Ականջ կդնեմ խոտի լուռ աճին:

Ուստի կարող եմ անկա՜խ, երազկո՜տ
Ես ինձ բախտավոր բանաստեղծ կնքել,
Բայց միանալով արտույտի կանչին՝
Բոլոր տողերս կարող են չքվել:

Իսկ այն զով քամին սաղարթների տակ
Միաձուլվում է բյուր ծաղիկներին,
Միանում սուլող թռչունի երգին
Եվ հասած, համեղ ելակի բույրին…

ՍԻՄՈՆ ՎԵՅԼ

ՔԵԶՆԻՑ ԿՄՆԱ

Քեզնից կմնա այն, ինչ տվել ես
Եվ ոչ թե պահել ժանգոտ պահոցում,
Մի փարթամ ծաղիկ, որ մոռացել ես,
Կմնա քեզնից քո գաղտնի այգում:
Ինչ ընծայել ես կծաղկի կրկին,
Նորից կամոքի կյանքը կորցրածին,
Կմնա քեզնից, ինչ հանձնես մեկին
Շողերի ներքո՝ վաղ արշալույսին:
Քեզնից կմնա այն, ինչ կորցրել ես,
Ինչին սպասել ես արթնացումից շատ,
Ուրիշը կզգա այն, ինչ տարել ես,
Հուսախաբ մարդուն կլինի խրատ:
Կմնա քեզից մի արցունք հոսող,
Մի ժպիտ ծաղկած սրտիդ աչքերում,
Կմնա քեզնից այն սերմը ցանվող,
Որ տեղ կգտնի մուրացող ձեռքում:
Ի վերջո սերմը նոր կյանք է ծնում,
Եվ կգտնի նա, ով լավ է փնտրում…

ՍԱՆԴՀԱՈՒԶԵՐ ՖԼԱՎԻԵՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՔԵԶՆԻՑ

Ծնկի եմ գալիս՝ լուռ հավաքելու
Հին ու մոռացված մի քանի հուշեր,
Ես պարտեզ եկա՝ կրկին փնտրելու
Քո մասին պատմող թեկուզ մի ստվեր:

Հեռվից լսում եմ դեռ ծիծաղը քո,
Որ իմ սրտի մեջ չի մարել երբեք,
Որ կյանք է տալիս լույսերի ներքո,
Բայց պակասում ես իմ օրերի մեջ:

Ցավից ճռռում են փեղկերն անցյալի,
Երբ փորձ եմ անում դրանք փակելու,
Թող իմ արածը մեղք չհամարվի,
Սիրտս պատրաստ չէ այդչափ նեղվելու:

Օրերը գալիս և անց են կենում՝
Բերելով հեռվից մոռացված մի երգ,
Հուշերս դրանք անգիր են անում՝
Թողնելով սրտիս վրա մի խոր վերք:

Մտքերիս համար ապաստան գտել
Եվ զերծ եմ պահել մոռացումներից,
Ժամանակն անգամ անզոր է եղել
Քեզ տանել հեռու իմ սիրող սրտից:

ԿՈՐՈՒՍՏ

Սկզբում լսում ենք ասվածը,
Հետո ենք միայն հասկանում,
Մեկ պահ է ապրում աշխարհը,
Քամու սուլոցի պես սուրում:

Հետո սկսում ենք արտասվել,
Վիշտը թաքուն է հարվածում,
Լռությունն է սկսում խոսել,
Դատարկություն է վկայում:

Հույզերի մեծ փոթորիկն է՝
Ցավի անսանձ մի մեծ մրրիկ,
Կյանքի շաչուն մի ապտակ է,
Որ չի թողնում գնալ մոտիկ:

Ժամանակը անց է կենում,
Բայց չեն փակվում հին էջերը,
Տառապանքը, որ չի մարում,
Պարտադրում է տանել բեռը:

Վիշտը միայն բառ է ասվող,
Որ սահմանում չի ճանաչում
Մի փորձություն չվերջացող,
Եվ մենությունն է սոսկ փրկում:

ԱՆԿԱՐՈՂ ԵՄ ՔԵԶ ՄՈՌԱՆԱԼ

Անկարող եմ քեզ մոռանալ,
Ինչպես որ դու ինձ մոռացար այդքան դյուրին,
Ես կողբամ և կհանձնեմ ինձ վշտերին,
Կուզեմ թախծել թեկուզ ափսոսանքի գրկում,
Կփորձեմ քեզ վերագտնել իմ տողերում,
Որ գտնեմ ես մի նոր հայացք,
Որ դարձել է սրտիս դաջվածք:

Անկարող եմ քեզ մոռանալ,
Ինչպես որ դու ինձ մոռացար այդքան դյուրին,
Ես կստեղծեմ մի կյանք կայտառ օրերում իմ,
Դաժան ցավից կթափառեմ հեռուներում,
Կխաբեմ ինձ հազար անգամ իմ մտքերում,
Որ չփնտրեմ դատարկ բառեր,
Որ ուժ գտնեմ՝ հառնեմ դեպ վեր:

Անկարող եմ քեզ մոռանալ,
Ինչպես որ դու ինձ մոռացար այդքան դյուրին,
Ես կստիպեմ քեզ հավատալ իմ ստեղծածին
Կփորձեմ ինձ կրկին տեսնել իմ հայելում,
Կշեղեմ ինձ կորստալի իմ վերքերում,
Որ փարատեմ մոռացված հուշ,
Որ չկարծեմ դարձել է ուշ:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Սիրո մեջ երջանկությունը
Խորհուրդն է սիրված լինելու,
Սիրո փոխադարձությունը
Չարչարանքն է ամեն օր կիսելու:

Երջանկություն է սերն ինքնին,
Սիրով պատվելը՝ ճոխ բերկրանք,
Ըմբռնելն է ամեն ինչի,
Ինչպես նաև՝ լոկ կարեկցանք:

Բերկրությունը չի արարվում,
Չի հորինվում մտքում անհուն,
Այն մի հույզ է, որ չի ստեղծվում,
Բայց կիսվում է ողջ աշխարհում:

Այս զգացումը չի հնարվում,
Այն չի կարող լինել պատրանք,
Իսկ այն, ինչ իմ մեջ է ապրում,
Ի պատիվ Քեզ՝ կոչվում է կյանք…

ԵՐԲԵՄՆ

Երբեմն
Հիշում եմ քեզ,
Ինչպես առաջին անգամ,
Երբ քեզ հետ էի…

Երբեմն
Հիշում եմ քեզ,
Ինչպես վերջին անգամ,
Երբ դեռ իմն էիր…

Երբեմն
Թվում է՝ առաջինն է կրկին,
Որ հիշում եմ քեզ,
Մինչ կլիներ արդեն վերջինը…

Երբեմն
Խաբում եմ ժամանակին,
Որ դեռ կողքիս ես, դեռ կաս,
Երբ դեռ լույս էր շողում վրաս…

Ֆրանսերենից թարգմանեց
ՍՈՆԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՍՐԲԱՁԱՆ ԴՈՂ

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

Ես Լիլիթն եմ, ծնվել եմ 2009 թվ.-ին: Սովորում եմ Գյումրու «Ֆոտոն» վարժարանում: Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի գրական ստուդիայի սան եմ:

Գրականությունն ինձ համար անտեսանելի կամուրջ է իրականության և երազանքի միջև, որտեղ բառերն ապրում են որպես շնչող, փոփոխվող աշխարհներ:

ՍՊԱՌՆԱԾՈՂ ԼՌՈՒԹՅՈՒՆ

Լռությանը մի անգամ ասացին.

-Դարձի՛ր այն հայելին, որտեղ արտացոլվում է մարդը…

Գյուղի մի անկյունում, որտեղ հողն անընդհատ շշնջում էր իր լուռ խոսքերը, կար մի լքված տուն: Այդ տանը ոչ ոք չէր ապրում արդեն երեք տասնամյակ: Տան պատուհանները կոտրված էին, դռները՝ ծուռ, իսկ ներսում տարիների փոշին և լռությունը կազմել էին տարօրինակ մի համադրություն: Տունը կարծես կանգնած էր ժամանակի և անէության միջնամասում:

Գյուղացիները չէին համարձակվում մոտենալ այդ տանը: Չգիտեին, թե ինչու, բայց բոլորը համակված էին մի տեսակ անսովոր վախով: Ասում էին, թե այդ տան լռությունը խոսում է, իսկ եթե երկար լսես, սկսում ես հասկանալ այդ ձայնը:

Մի օր գյուղ եկավ մի երիտասարդ՝ Ռուբենը: Նա քաղաքում փիլիսոփայություն էր ուսումնասիրում և վերադարձել էր իր ծննդավայր՝ հոգու հանգիստը գտնելու համար: Ռուբենը սիրեց գյուղի խաղաղությունը: Հատկապես հետաքրքրվեց լքված տան պատմությամբ:

«Ի՞նչ է լռությունը»,- մտածում էր Ռուբենը:

Նա ամբողջ կյանքում փնտրել էր պատասխանը այս հարցի՝ փորձելով հասկանալ, թե ինչ են ներկայացնում լռության մեջ թաքնված զգացումները, վախերն ու հույսերը: Նա որոշեց այցելել այդ տունը:

Գիշերը, երբ գյուղը լուռ էր, իսկ երկինքը՝ լի աստղերով, Ռուբենը բարձրացավ լքված տան բլուրը: Լուսնի լույսը մռայլ էր թվում տան պատերին: Նրա սիրտը արագանում էր, բայց միաժամանակ անհասկանալի հետաքրքրությունը նրան առաջ էր մղում:

Տուն մտնելուն պես նա զգաց լռությանը, որը, կարծես, կենդանի էր: Ռուբենը նստեց փայտե կոտրված աթոռին ու աչքերը փակեց: Սկզբում ոչինչ չէր լսվում, բայց քիչ անց լռությունը սկսեց իր սեփական պատմությունը:

-Ես պատիժ եմ,- ասաց,- ես խոսում եմ նրանց հետ, ովքեր լսում են: Մարդիկ փախչում են ինձնից, որովհետև վախենում են լսել իրենց սեփական ձայները: Ես նրանց համար հայելի եմ, որտեղ նրանք տեսնում են իրենց մոռացված սխալները, կորցրած երազանքները և չհասկացված սերը: Մարդիկ պարզապես սարսափելի վախկոտ են:

Ռուբենը սառավ: Նա հասկանում էր, որ այդ ձայնը իրական չէ, բայց նույնքան էլ չէր կարող հավատալ, որ այն պարզապես իր երևակայությունն էր:

Լռությունը շարունակեց.

-Մարդիկ թաքնվում են աղմուկի մեջ՝ վախենալով ինքնաճանաչումից: Նրանք խուսափում են ինձնից, որովհետև ես ցույց եմ տալիս նրանց իրականությունը: Բայց դու՝ դո՛ւ, ով եկել է ինձ լսելու, պատրա՞ստ ես ճշմարտությունը տեսնելու:

Ռուբենը դողդոջուն ձայնով ասաց.

-Ես ուզում եմ հասկանալ: Ո՞վ ես դու և ինչո՞ւ ես սպառնում:

Լռությունը պատասխանեց.

-Ես սպառնում եմ նրանց, ովքեր չգիտեն, թե ով են իրենք: Բայց քեզ համար ես առիթ եմ՝ տեսնելու այն, ինչ չես տեսել:

Այդ գիշեր Ռուբենը մնաց տանը, լսեց լռության պատմությունները, որոնք վերածվում էին իր սեփական հիշողությունների: Նա վերհիշեց իր կյանքի սխալները, կորուստները, բայց նաև՝ հաղթանակները:

Առավոտյան, երբ գյուղացիները տեսան նրան լքված տան բլուրից իջնելիս, զարմացան:

-Ի՞նչ տեսար այնտեղ,- հարցրին:

Ռուբենը ժպտաց ու պատասխանեց.

-Ձեր պատկերացրած վիշապ-տան միակ կահույքը հայելին էր, այդ տունը ամբողջությամբ լի էր անտեսանելի հոգու հայելիներով, որտեղ արտացոլվում է ամեն ինչ, ինչ կատարվում է: Անտեսանելի հայելի կա ամենուր և չի սպառնում մեզ, եթե ընդունում ենք այն, ինչ տեսնում ենք:

Գյուղացիներն առաջին անգամ սկսեցին մտածել, որ գուցե լռությունը միայն վախեցնելու համար չէր, այլ սրտի խոսակցությունների համար:

Եվ լքված տան լռությունը կարծես խաղաղվեց:

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Դու լույս ես, իսկ մութը միայն քեզ զսպելու փորձն է…

Միերը միշտ հետևում էր աստղերին՝ տեսնելով ոչ միայն իրենց շողալը, այլև իրենց անտեսանելի պայքարը: Նա կարծում էր, որ աստղերը մի տեսակ մենամարտում են մութի հետ, փորձում են հաղթել խավարին՝ իրենց լույսով: Իսկ ինքը, ինչպես մնացած բոլորը, ընկած էր այս մոլորակում, որտեղ մութը երբեք չի լքվում, իսկ լույսը երբեմն այնքան շատ է փայլում, որ դառնում է միայն կուրացնող:

Մի օր, երբ նա բարձրացավ քաղաքից հեռու մի լեռան գագաթ, սկսեց մենամարտել ոչ միայն մութի դեմ, որ օրվա ընթացքում նրան շրջապատում էր, այլև այդ աստղերի հետ, որոնք թվում էին այնքան հեռու, բայց նաև այնքան մոտ, կարծես հենց նրա ձեռքերում էին: «Իսկ եթե ես կարողանայի հասնել նրանց և դառնալ նրանցից մեկը»՝ մտածեց նա: «Իսկ եթե ես կարողանայի լույսի տեր լինել, ոչ թե ստվերների մեջ մնալ: Եվ իրականում ո՞վ է մարդը այս մեծ տիեզերքում, ինչո՞վ է նա տարբերվում աստղերից: Եվ մարդը գայթում է: Քանզի անհաս է աննյութեղեն նյութը, որ հոգևոր ոլորտում բնակվելու իրավունքը նվաճեց՝ պատառոտելով իր ներաշխարհը»:

Երբ նրա հայացքը խորացավ աստղալից երկնքում, նրա մեջ ինչ-որ բան սկսեց փոթորկվել: Նա սկսեց պատկերացնել, թե ինչպես է բարձրանում այդ հեռու աստղատներից մեկը՝ անցնում ամեն մի մութ կետի վրայով և միշտ պայքարում՝ լույսի մեջ մնալու համար: Ամեն շարժում, ամեն պայծառ շող, մի նոր մարտիկ էր այդ հրաշալի պատերազմում:

Հիշեց, թե ինչպես իր կյանքում փորձեր էին, մութն ու լույսը մշտապես պատերազմել են: Երբ նրա մութ մտքերը խառնվում էին կյանքի ճնշող ու անորոշ խոսքերի հետ, նա միշտ երազում էր մի բարձունք հասնել, որտեղ ոչինչ չէր կարող խանգարել նրա ուղուն:

Մի պահ նա կանգնեց և նայեց աստղերին. «Եթե դրանք կարող են անընդհատ պայքարել, պայքարել մինչ անվերջություն, ինչու չէինք կարողանա մենք՝ մարդիկս, նույնը անել: Ինչու չէի կարող ես այս մութը հաղթահարել, այս ծիծաղը, այս հուսահատությունը: Ես կփորձեմ, ես կպայքարեմ, ինչպես աստղերը»:

Եվ այդպես՝ նրա հայացքն արդեն չէր ուղղվում դեպի ներքև: Նա այլևս չէր տեսնում այն մութը, որ իրեն շրջապատում էր: Նա սկսեց քայլել դեպի լեռան գագաթը, բարձրանալ այնտեղ, որտեղ, ինչպես երևում էր, աստղերը նույնպես չէին դադարում իրենց անլուծելի մենամարտը:

Միերը հասավ գագաթին, կանգնեց ու պարզեց ձեռքերը երկինք: Նա գուցե չէր կարող հասնել աստղերին, բայց իր մեջ ինչ-որ բան փոխվեց (և դա ամենակարևորն է): Մենամարտը սկսվեց նրա ներսում՝ այնպիսի ուժով, որ այլևս ոչ մի մութ չէր կարողանում խանգարել նրա լույսին:

Նրա պատմությունը, աստղերի հետ մենամարտը, սկսվեց այնտեղ՝ հենց այն պահին, երբ նա հավատաց, որ միայն պայքարը կարող է տանել դեպի լույս:

Միերը բարձրացրեց ձայնը դեպի աստղերը.

«Ես ձեզ հասկացա: Դուք սովորեցնում եք, որ իրական լույսը այն չէ, որ մենք տեսնում ենք աչքերով, այլ այն, որ մենք կրում ենք մեր հոգու մեջ: Դուք հիշեցնում եք, որ հաղթանակը ոչ թե աշխարհի վրա է, այլ մեր սրտերում»:

Աստղերի լռությունն էր պատասխանը, բայց նա զգաց, թե ինչպես է ամբողջ տիեզերքը արձագանքում իր խոսքերին: Նա նստեց գագաթին ու փակեց աչքերը՝ լսելով սառը քամու հնչյունները: Հենց այդ պահին նա հասկացավ, որ երբ մարդը գտնում է իր սեփական լույսը, նա դառնում է տիեզերքի մի մասը՝ ոչ թե որպես արտաքնապես փայլող, այլ որպես ներքուստ վառվող աստղ:

Եվ այդպես Միերը դարձավ իր լույսի ճանապարհի նվիրյալ մարտիկը՝ մենամարտելով ոչ միայն սեփական մութ մտքերի, այլև շրջապատող աշխարհի անտարբերության դեմ՝ համոզված, որ հենց ինքը պիտի լինի այն, ով կվառի լույսը այնտեղ, որտեղ ամեն ինչ թվում էր կորած:

Նա սկսեց մտածել, թե ինչու մարդիկ հաճախ հարմարվում են մութին, ինչպես մոմը, որը կարող է մարվել փոքրիկ քամուց: Բայց նա որոշեց այլ կերպ լինել. լինել «կայծ», որն իր միջից կթռչի ու կվառի ամեն ինչ՝ մինչև լույսի կայուն բոց դառնալը:

Պետք է դառնալ «կայծ», որը «կվառի» մյուսների ճանապարհը: Լինել աստղ, որը լույս կտա նրանց, ովքեր դեռ խավարում են: Աստղերի մենամարտը պարզապես հիշեցնում է, որ մենք բոլորս ունենք մեր առաքելությունը:

Միերը գիտեր, որ պետք է վերադառնա մարդկանց մոտ՝ ոչ թե նրանց փոխելու, այլ նրանց հիշեցնելու իրենց սեփական լույսի մասին: Նա գիտեր, որ իր ամեն մի խոսքը պետք է լինի այդ լույսի արտահայտումը: Երբ նա իջավ լեռից, նրա քայլերը ծանրաբեռնված էին ոչ թե հուսահատությամբ, այլ հույսով: Միերն արդեն չէր փնտրում աստղերը՝ որպես հեռավոր երազանք, այլ որպես իր կյանքի ուղեցույց:

ՍՐՏԻ ԿՇՌՄԱՆ ՕՐԸ

Սիրտը չափման միավոր չունի…

Ամբողջ կյանքում նա ապրեց իր օրենքներով՝ ո՛չ շատ արդար, բայց ո՛չ էլ անխիղճ: Անունը Արեգ էր, և նա հավատում էր, որ ամեն մարդ իր ճակատագրի տերն է: Բայց ահա կանգնած էր նա մեծ դահլիճի կենտրոնում՝ սպասելով իր վերջին դատաստանին:

Դահլիճը լցված էր լույսով, բայց ոչ արեգակի, այլ անբացատրելի մի փայլով, որը սփռվում էր դրսից, կարծես ոչ մի պատ գոյություն չուներ: Նրա առջև կանգնած էր բարձրադիր մի էակ՝ ո՛չ մարդ, ո՛չ աստված, այլ պարզապես ներկայություն:

- Արե՛գ, այսօր քո սրտի կշռման օրն է, - ասաց էակը մեղմ ձայնով, բայց հաստատակամ:

Արեգը նայեց իր առաջ: Կենտրոնում կանգնած էր հսկայական կշեռք, և դրա վրա՝ երկու կողմում, սպասում էին երկու տարօրինակ առարկա: Մեկ կողմում դրված էր փետուր՝ ճերմակ ու անարատ, իսկ մյուս կողմում՝ դատարկություն:

-Ի՞նչ պետք է անեմ, - հարցրեց Արեգը՝ չկարողանալով զսպել ներսում ծնվող վախը:

-Պետք է դնես քո սիրտը կշեռքի վրա, և մենք կիմանանք՝ արդյոք այն ծանրացե՞լ է մեղքերով, թե՞ թեթև է արդարությամբ:

Արեգը մի պահ կանգնեց: Ի՞նչ: Կշռի՞ իր սիրտը: Ո՞վ կարող է ասել, թե ինչքան մեղք կամ բարություն է կուտակել կյանքի ընթացքում: Նա հիշեց այն բոլոր ընտրությունները, որ կատարել էր, այն խոսքերը, որ ասել էր, և այն պահերը, երբ լռել էր, թեև պետք էր խոսել:

Վերջապես, առանց մտածելու, նա ձեռքերը տարավ կրծքին և իր սիրտը դուրս բերեց: Այն զարմանալիորեն թեթև էր թվում իր ափի մեջ, բայց երբ դրեց կշեռքին, այն սկսեց ծանրանալ, կարծես տարիների ապրումները նորից լցվում էին մեջը:

Փետուրը դանդաղ տատանվեց, իսկ սիրտը կշռում էր իր ողջ ծանրությամբ:

- Եվ ո՞րն է դատավճիռը, - շշնջաց Արեգը:

- Դատավճիռ չկա, - ժպտաց էակը: - Միայն ըմբռնում:

Այդ պահին նա հասկացավ, որ դատավճիռն արդեն կայացված էր. այն դաջված էր իր անցած կյանքում, իր կատարած ու չկատարած ընտրություններում: Սիրտը կշռված էր ոչ թե կշեռքով, այլ հենց իր հիշողություններով:

Եվ երբ փակեց աչքերը, զգաց, որ առաջին անգամ իր կյանքում նա իսկապես հասկացավ՝ ո՛վ էր եղել և ի՛նչ ճանապարհ էր անցել:

ՄԱՐԴՈՒ ՄԱՀՆ ՍԿՍՎՈՒՄ Է ԱՉՔԵՐԻՑ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ (ԴԱՐՈՒՀ)

Կեսգիշերին մոտ՝ ամեն անգամ, երբ բացում էի դուռը, ինձ թվում էր, թե ներսի մութը սև հեղուկի նման թափվում է դեմքիս: Ակամայից կծկվում էի ու փակում աչքերս: Վերջին օրերին ամենազզվելի բանը ինձ համար սենյակ մտնելն էր: Այս գիշեր այդ հեղուկ մութը սովորականից թանձր թվաց ինձ:

Միջանցքի լույսը ես սովորաբար չեմ վառում, այլ ուղղակի մտնում եմ սենյակ:

Եթե անկեղծորեն խոստովանեմ, ամբողջ տան մեջ միայն մի չփչացած էլեկտրալամպ կար. դա սենյակինն էր: Ամեն օր մոռանում էի խանութից լամպ գնել և այդ մասին հիշում էի միայն գիշերները, երբ ճանապարհում էի Սիլվային և կիսամութ նրբանցքներով վերադառնում էի տուն:

«Վաղն անպայման կգնեմ», - մտածեցի ես ու վառեցի լույսը:

Լամպը մի պահ պայծառ վառվեց ու հանգավ. երևի փչացավ…

Ոտնաթաթերի վրա բարձրանալով՝ հանեցի այն, թափահարեցի: Լսվեց ապակուն դիպչող վոլֆրամի չխչխկոցը: Այո՛, փչացավ:

Նայեցի շուրջս. սենյակի մութը սկսվեց ինձանով, պտտահողմ դարձած ինձ առավ իր մեջ, ապա վերջանալով կախվեց հարազատներիս դեմքերից:

Իմ վերջին ընդհարումը հայրիկիս հետ վերջնականապես խզեց մեր կապերը: Ուրիշ էլ ո՞վ: Գուցե քո՞ւյրս, օ՜, ո՛չ, նա այնքան հպարտ է, որ հազիվ թե հիշի ինձ:

Այս լուռ մենախոսությունը միայն մի քանի վայրկյան տևեց:

***

«Հաստատ սխալ եմ ընկել», - եզրափակեց նա և շրջվեց դեպի այն կողմը, ուր մահճակալն էր դրված: Այդ պահին աջ այտին զգաց ուժեղ ծակոց: Նա ձեռքով շփեց այտը: Ապակու կտորը, որ խրվել էր այնտեղ, ընկավ հատակին: Մութն անմիջապես արյունոտվեց: Մթության մեջ որքան հնարավոր էր արագ մոտեցավ մահճակալի մոտ դրված փոքրիկ սեղանին, որի վրա լրագրեր էին թափված: Մեկի ծայրից մի փոքր պատռելով՝ կպցրեց այտին:

Ապա մոտեցավ հայելուն ու վառեց լուցկին: Լեզվի ծայրով թրջելով մատը՝ նա մաքրեց դեմքի՝ ներքև հոսող արյան բարակ շերտը: Վառվող հատիկը այրեց նրա մատը, հազիվ նետեց հատակին: Սենյակը նորից ընկղմվեց խավարի մեջ: Հետո վառեց երկրորդ հատիկը: Հայելու մեջ կրկին երևաց արտացոլումը՝ թղթի փոքրիկ կտորը աջ այտին:

- Լուսացավ, - ասաց նա ու քմծիծաղեց: Ապա վառեց երկրորդ հատիկը ու մոտեցրեց հայելու ճիշտ այն մասին, որտեղ իր աչքն էր:

- Տեսնու՞մ ես, կրկին լուսացավ: Սրանից հետո ես էլ լամպ չեմ գնի, որպեսզի ամեն երեկո քեզ հետ խաղամ այս հրաշալի խաղը:

Նա երկար ծիծաղեց ու հեռացավ հայելուց:

***

Հայելու կիսախավարում երևում էր իմ արտացոլումը՝ թղթի փոքրիկ կտորը այտիս: Վառվող հատիկը այրեց մատս: Ես այն գցեցի հատակին, սենյակը կրկին լցվեց մութով: Արդեն ուզում էի հեռանալ հայելուց, բայց, չգիտեմ ինչու, վառեցի երկրորդ հատիկը: Հայելու մեջ կրկին երևաց իմ արտացոլումը: «Լուսացավ», - մտածեցի ես: Հետո փչեցի, վառվող հատիկը հանգավ:

«Մթնեց»:

Այդ ամենը, իրոք, այդպես էր, և ես մի պահ հասցրի մտածել, որ դա նմանվում է իմ յուրաքանչյուր օրվան: Սակայն այդ պահին ինձ հետաքրքրողը դա չէր, այլ աչքերը, որ նկատեցի հայելու կիսամութի մեջ:

Ես վառեցի երրորդ հատիկը:

Այո՛, հայելու մեջ ճիշտ նույն աչքերն էին:

Մորս աչքերը:

Նստելով մահճակալին՝ հանեցի պիջակս ու նետեցի կողքի փոքրիկ սեղանին:

Միջանցքում կրկին հնչեց հեռախոսի զանգը:

«Այդպես, դարձյալ սխալ ես ընկել», - մտածեցի ես և հանկարծ ոտքով խփեցի արդեն հանած կոշիկիս: Լսվեց սահող ներբանի խզզոց, և հետո, ինչ- որ բանի դիպչելով, կոշիկը կանգ առավ:

Լուսացավ: Մթնեց: Դրանք գույներ են միայն:

***

Հինգ տարի սովորեցի նկարչական ուսումնարանում: Բայց նկարիչ չդարձա, ափսոս: Հետո չորս տարի սովորեցի ինստիտուտում և դարձա սրբագրիչ:

«Գրողը տանի, հրաշալի է»: Նա հանկարծ ծիծաղեց. «Ամրություններ…»:

-Անուշադիր ես, Սարգսյան, անուշադիր, այդպես չի կարելի:

Բայց քանի որ ինքն էր այդ սխալի հեղինակը, ամեն ինչ վերջացավ լակոնիկ ձևով:

Ոչինչ, մի փոքրիկ վրիպակ է:

Բայց այդ փոքրիկ վրիպակը վաղը ամբողջ քաղաքը կկարդա:

Նա չհանվեց, այլ ուղղակի շորերով պառկեց անկողնում: Վերջին օրերին ամեն անգամ, երբ մտնում էր վերմակի տակ, նրան թվում էր, թե մինչև կոկորդը թաղվում է ջրհորի մեջ: Գիշերները հաճախ արթնանում էր այն հանկարծահաս զգացումից, թե սուզվում է արդեն: Քունը այլևս փախչում էր աչքերից, և ընկնում էր տարօրինակ մղձավանջի մեջ: Տանջվում էր: Ճիշտն ասածինքն էլ ստույգ չէր կարող բացատրել տանջվելու պատճառը: Միայն մերթ ընդ մերթ զգում էր, որ մենակությունը չսիրած մարդու ներկայության նման ճնշում էր իրեն: Բայց երբ պատկերացնում էր այդ պահին ծանոթներից մեկին, բազմոցին նստած իր հետ խոսելիս, կնճռոտում էր դեմքը և մոռանում մենակության մասին:

***

Դա մեկ շաբաթ առաջ էր: Երբ դուրս եկա տպարանից, անձրև էր գալիս:

- Սպասեք, մինչև կտրվի, - իմ թիկունքում լսեցի Սիլվայի ձայնը: Նա մեր երկրորդ սրբագրիչն էր, երեսուն տարեկան մի կին, որն հենց սկզբից, չգիտեմ ինչու, ինձ վրա թողեց տհաճ տպավորություն: Ամեն անգամ ես նրան ճանապարհում էի մինչև տուն: Մեր լուռ պայմանավորվածության համաձայն՝ դա իմ պարտականությունն էր: Նա գիտեր, որ ես անձրևի տակ քայլել չեմ սիրում և առաջարկեց սպասել: Լսելով Սիլվայի ձայնը՝ ես զգացի, որ բոլորովին մոռացել եմ նրան:

- Չէ, ինչո՞ւ, քայլենք անձրևի տակ:

***

Հաճախ է պատահում, որ ամենափոքրիկ բանը մարդու ամենամեծ ուրախության պատճառն է դառնում: Այդպես պատահեց նաև նրա հետ երեք օր առաջ՝ կիրակի գիշերը: Նա միանգամից արթնացավ ու մթության մեջ արագ շուրջը նայեց, կարծես փնտրում էր ինչ-որ մեկին:

«Անհետաքրքիր մարդ ես, Ռոբերտ»,- այո, դա մայրն ասաց մահից մի քանի շաբաթ առաջ: Նա հիշեց գարնանային այդ օրը: Հիշեց իրենց տունը, որտեղ այժմ հայրն է ապրում:

Միջանցքի ձախ կողմի ննջասենյակը մայրիկինն էր:

Այդ օրը մայրը նստած էր ճոճաթոռին ու նայում էր պատուհանից դուրս: Երբ ներս մտավ, մայրը չնկատեց նրան: Սպիտակ շալն ընկել էր ուսերից, իսկ մոռացված գիրքը 217 էջի վրա այդպես բաց մնացել էր ծնկներին:

Երկար կանգնեց մոր թիկունքում՝ չցանկանալով խանգարել նրան: Մոր մազերն արդեն կիսով չափ սպիտակ էին՝ չնայած դեռ քառասունհինգ տարեկան էր: Գունատ ձեռքը անօգնական հանգչում էր ծնկի վրա: Մաշկը այնպես թափանցիկ էր, որ պարզորոշ երևում էին երակները: Նա տեսնում էր մոր ակնոցի շրջանակի մի մասը: Ափսոս, որ այդ պահին չէր կարող տեսնելնրա հայացքը: Վերջին օրերին նա հաճախ էր գիրքը մոռանում ծնկներին, ժամեր շարունակ նայում պատուհանից դուրս: Թե ինչ էր մտածում այդ ժամերին, անհայտ էր:

***

Նա լրիվ ուշքի եկավ: Այո, դա մայրն ասաց՝ մահից մի քանի շաբաթ առաջ: «Իսկ ինչո՞ւ ասաց», - մտածում էր նա:

Ինքն ի՞նչ պիտի անի հետաքրքիր լինելու համար՝ ծիծաղի՞, պարի՞, շատախոսի՞, տեղիանտեղի փիլիսոփայի՞:

Մի խոսքով անի այն ամենը, ինչն այդ պահին, ասենք, չի՞ ուզում անել: Ո՛չ, ավելի լավ է լռել ու մնալ անհետաքրքիր:

Նրա հայացքը հանկարծ ընկավ վարագույրի անցքից առաստաղին ընկած լույսի բարակ շերտին: Նա հետզհետե սկսեց ավելի ուշադիր նայել: Այն որոշակիորեն նմանվում էր կնոջ ուրվագծի: Այդ կինը կանգնած էր ձեռքը կոնքին դրած, կարծես խոսում էր ինչ - որ մեկի հետ:

«Ես քեզ սիրում եմ, կի՛ն: Դու հանդիպում ես ինձ ամեն քայլափոխի, և միայն ես գիտեմ, թե ինչ է կատարվում ինձ հետ ամեն անգամ, երբ հանդիպում եմ քեզ»:

***

Մայրս այդպես էլ չհասկացավ ինձ, չհասկացավ նա, ում միջոցով ես հասկացա, թե ինչ է սերը, և սովորեցի ամեն ինչի մեջ տեսնել գեղեցիկը և հրաշալին, ու մնացի իր համար իբրև լուռ ու տխուր մարդ:

Հիմա ամեն առավոտ տեսնում եմ նրան: Երկու երեխաների ձեռքը բռնած՝ շտապելով անցնում է փողոցը, նստում ավտոբուս ու տանում է նրանց մանկապարտեզ:

«Ես քեզ սիրում եմ, կի՛ն: Եվ կսպասեմ այնքան, մինչև դու սիրես իմ լռությունը: Այն ժամանակ միայն…»:

***

Մենք արագ անցանք կիսամութ նրբանցքը: Երբ հասանք փողոց, նա թողեց իմ թևը: Նրանց տունը հեռու չէր (ընդհանուր՝ մեկ կանգառ), և մենք երբեք չէինք սպասում ավտոբուսի:

-Ինձ սիգարե՛տ տուր:

Ես մի պահ հապաղեցի: Ուզում էի հարցնել. «Մի՞թե դու ծխում ես», սակայն լռեցի ու մեկնեցի նրան ծխախոտի տուփը:

-Ինքդ վառի՛ր ինձ համար:

Ես դարձյալ կատարեցի նրա ցանկությունը:

Անձրևը հետզհետե ուժեղանում էր, սակայն այն կարծես ինձ համար չէր:

Ես քայլում էի մոռացած ամեն բան, և ցանկանում էի, որ դա շարունակվեր ու շարունակվեր: Փողոցում ոչ ոք չկար: Միայն մերթ-մերթ անցնող մեքենաների ձայնն էր խլացնում անձրևի խշշոցը: Բոլորովին մոտիկ ինչ-որ տեղից հանկարծ լսվեց նվագի ձայն, հետո ծափեր և ուրախ աղաղակ: Մոտիկ ինչ-որ տեղ հարսանիք էր: Մենք անցանք փողոցն ու քայլեցինք դիմացի մայթով: Երբ նորից լսեցի Սիլվայի ձայնը, դարձյալ զգացի, որ բոլորովին մոռացել եմ նրա գոյությունը:

- Ահա և մեր շենքը: Չորրորդ հարկի իմ սենյակի լույսը վառված է, չնայած այնտեղ հիմա ոչ ոք չկա: Ես վախենում եմ մտնել մութ սենյակ: Ես զգում էի, որ ինչ-որ բան պետք է ասեմ նրան, սակայն հարմար բառեր չգտա և լռեցի:

- Ձանձրալի մարդ ես, Ռոբե՛րտ, մի սիգարետ վառիր… Այո՛, ձանձրալի. ամեն անգամ, երբ քայլում եմ քեզ հետ, ես մոռանում եմ, որ կին եմ: Քո անտարբերությունն արդեն վիրավորական ու զզվելի է: Քեզ հետ ինձ ավելի մենակ եմ զգում, քան այնտեղ՝ իմ սենյակում:

Նա արագ հեռացավ: Հետո մի պահ կանգ առավ ու նայելով հետ՝ թափահարեց ձեռքը:

- Բարի գիշեր, Ռոբե՛րտ:

Ես կանգնած դիտում էի նրա հեռացող ու մթին ծուլվող ուրվագիծը:

Տուն հասա կեսգիշերին մոտ: Այնպես էի հոգնել, որ ուրիշ ոչ մի բանի մասին չէի ուզում մտածել: Թաց շորերս կպել էին մարմնիս, և ես մրսում էի: Երբ մտա անկողին, ինձ թվաց, թե մինչև կոկորդս թաղվեցի ջրհորի մեջ: Այդ զգացումը չլքեց ինձ նույնիսկ քնած ժամանակ:

Արթնացա հանկարծ: Դեռ մութ էր սենյակում: Անկողնում նստած՝ մթության մեջ շուրջս էի նայում: Իմ ականջներում դեռ հնչում էր մորս ձայնը.

- Անհետաքրքիր մարդ ես, Ռոբե՛րտ: Վաղը ոչ մի կին քեզ հետ չի ապրի՝ առանց ծանձրանալու:

… Երևի կանխազգում էր մոտալուտ մահը: Այդպիսիների մեջ ինքնամփոփ լինելու կրքոտ ցանկություն է ծնվում: Եվ նրանք լռում են: Ավելի ճիշտ խոսում են իրենք իրենց հետ և այն էլ անցյալի լեզվով:

Օրվա մեջ երկու անգամ՝ ժամը 11-ին և 12-ին, ճշտապահ ջենտլմենի նման զանգում էր հայրը:

- Ինչպե՞ս է իրեն զգում տիկին Ամալյան:

Նա այլևս չէր կարող լուռ կանգնած մնալ մոր թիկունքում: Ետ դարձավ.

- Ռոբե՛րտ, դու արդեն գնո՞ւմ ես:

Տարօրինակ բան, քսանհինգ տարի է՝ ապրում են միասին, սակայն նրան թվում է՝ առաջին անգամն է տեսնում մորը:

Այդ բարի կինը, որ թվում էր, թե բացի օլիմպիական հանգստությունից ուրիշ ոչինչ չունի իր հոգում պահած, հանկարծ սկսեց խոսել: Նա ուզում էր լսել, թե ինչ է ասում մայրը:

***

Ես հիշեցի գարնանային այդ օրը: Հիշեցի մեր տունը, որտեղ այժմ հայրս է ապրում: Միջանցքի ձախ կողմի ննջասենյակը մայրիկինն էր: Այդ օրը մայրս նստած էր ճոճաթոռին ու նայում էր պատուհանից դուրս: Երբ ներս մտա, նա չնկատեց ինձ: Սպիտակ շալն ընկել էր ուսերից, իսկ մոռացված գիրքը 217 էջի վրա այդպես մնացել էր ծնկներին:

Ես երկար կանգնեցի մորս թիկունքում՝ չցանկանալով խանգարել նրան:

Նրա մազերն արդեն կիսով չափ սպիտակել էին: Գունատ ձեռքն անօգնական հանգչում էր ծնկի վրա: Մաշկն այնպես թափանցիկ էր, որ պարզորոշ երևում էին երակները: Տեսնում էի նրա ակնոցի շրջանակի մի մասը: Նա նստել էր անշարժ՝ վերացած տեղից ու ժամանակից:

Վերջին օրերին մայրս հաճախ էր այդպես երկար, ժամեր շարունակ նայում պատուհանից դուրս: Ի՞նչ էր մտածում այդ ժամերին, ինձ համար անհայտ էր: Երևի նախազգում էր մոտալուտ մահը: Ու այդպիսիների մեջ ինքնամփոփ լինելու կրքոտ ցանկություն է ծնվում: Եվ նրանք լռում են: Ավելի ճիշտ խոսում են իրենք իրենց հետ ու երևի ամբողջությամբ վերապրում մեկ անգամ արդեն ապրած կյանքը:

Ես այլևս չէի կարող լուռ

կանգնած մնալ: Ետ դարձա ու զգույշ քայլեցի դեպի դուռը:

Այդ պահին հանկարծ լսեցի նրա ձայնը.

- Ռոբերտ, դու արդեն գնո՞ւմ ես:

Նա մտածում էր, որ մայրը սովորականի նման հիվանդ է, ինչպես հաճախ էր պատահում նրա հետ վերջին երկու տարում: Սակայն այդ պահին, նայելով դեպի իրեն ուղղված մոր աչքերին, նա փախցրեց հայացքը և զգաց, որ դեմքը գունատվեց վախից: Մոր աչքերը բոլորովին խամրել էին և արտահայտում էին ամեն բանի հետ հաշտված սառը անտարբերություն:

«Մարդու մահն սկսվում է աչքերից», - մտածում էր նա և զգում, որ այլևս չի կարող հանգիստ կանգնած մնալ;

- Քիչ հետո կգանգի հայրդ,- հանկարծ լսեց մոր ձայնը,- վերջին օրերին ես միշտ սպասում եմ նրա զանգերին: Հասկանու՞մ ես, Ռոբերտ, այդ զանգերն ինձ ավելի շուտ զայրույթ են պատճառում, քան հանգստություն: Նրա միշտ նույն, հանդիսավոր, տխուր տոնը, միշտ միևնույն ձայնագրված նախադասությունը…

«Ինչպե՞ս է իրեն զգում տիկին Ամալյան»: - Ռոբերտ, գուցե ես սխալվում եմ, և այդ ամենը բնավ էլ այդպես չէ, բայց գոնե մեկ ուրիշ նախադասություն ասի, թեկուզ հայհոյի, բայց ոչ այդ նույն տխուր, հանդիսավոր տոնով: Եթե իրոք «վաղը» ինձ համար գոյություն չունի, դա չի նշանակում, թե այսօրվանից ինձ հետ պետք է դադարեն վերաբերվել այնպես, ինչպես երեկ կամ երկու օր առաջ: Մի՞թե նա այնտեղ՝ իր աշխատանքի վայրում, բնավ չի ծիծաղում: Ոչ, ինձ ճիշտ հասկացիր, Ռոբերտ: Ես հիմա էլ եմ ցանկանում լսել նրա ծիծաղը: Մեկ ժամից կգա բժիշկը: Այդ բարի ծերուկը, որ իմ հոր վաղեմի բարեկամն է եղել, կստուգի ինձ, գլուխը կտմտմբացնի ու կնստի աթոռին: Նա հրաշալի զրուցակից է, և մենք երկար զրուցում ենք ամեն ինչի մասին: Նա պատմում է ինձ իմ մանկությունից: Նա միակ մարդն է, որ հիշում է իմ մանկությունը: Մենք հիանալի հասկանում ենք իրար: Նա դեղեր է տալիս ու խաբում ինձ: Իսկ ես խմում եմ այդ դեղերն ու խաբում նրան: Մեզ չափազանց դուր է գալիս այդ խաղը:

***

Նա լսում էր մորը՝ հայացքը հառած ներքև, և այլևս չէր համարձակվում նայել նրա դեմքին:

Ժամանակը ճանճի նման դզզում էր նրա ականջին, և այդ հավիտենական թվացող դզզոցի մեջ անընդհատ կրկնվում էր միևնույն միտքը՝ «Մարդու մահը սկսվում է աչքերից»:

Նա ուզում էր թողնել-հեռանալ, որքան հնարավոր է հեռու, մենակության մեջ: Մենակությունը նրա ամենամտերիմ ընկերն է, խոստովանահայրը:

- Եթե վաղը, իրոք, ինձ համար գոյություն չունի, սակայն դա չի նշանակում, թե այսօրվանից ինձ հետ պետք է դադարեն վերաբերվել այնպես, ինչպես երեկ, կամ երկու օր առաջ: Ո՛չ, Ռոբե՛րտ, քո հայրը բոլորովին էլ վատ մարդ չէ: Ես այդ չեմ ասում: Նա ինձ հետ կապված էր իր ողջ էությամբ: Ես այդ լավ գիտեմ: Պարզապես ես նրա համար երբեք ամբողջ չեմ եղել, այլ այդ ամբողջի մի մասնիկը միայն, մշտական մասնիկը: Դա հասկացա մեր ամուսնության առաջին իսկ տարում: Այն ժամանակ ես շատ էի տանջվում: Հաճախակի էին նաև վեճերը: Նույնիսկ մտածում էի բաժանվելու մասին: Սակայն… Նա լռեց ու շրջվեց դեպի պատուհանը: Եվ երբ նորից խոսեց, ձայնն արդեն հանգիստ էր.

- Քիչ հետո կգա բժիշկը: Այդ բարի ծերուկը, որ իմ հոր վաղեմի բարեկամն է եղել, կնայի ինձ, կտարուբերի գլուխը ու կնստի աթոռին: Նա հրաշալի զրուցակից է, և մենք զրուցում ենք ամեն ինչի մասին:

Ես լսում էի մորս և զգում, որ հետզհետե իմ աչքի առաջ նա հեռանում է, և եթե ցանկանամ բռնել ծնկի վրա դրած նրա ձեռքը, ապա կդիպչեմ դատարկ ճոճաթոռին:

Ժամանակը ճանճի նման դզզում էր իմ լսելիքում, և այդ հավիտենական թվացող դզզոցի միջից անընդհատ կրկնվում էր միևնույն բանը.

- Մարդու մահը սկսվում է աչքերից…

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅՏԻ ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԱՏՅԱՆՆԵՐՆ ՈՒ ՏԵԱՅԻՆ ԱՂՈԹԱՐԱՆՆԵՐԸ

Տան սրբերը Շիրակում առավել հայտնի են դարձել, երբ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից (Բարձր Հայք, Կարս, Բասեն, Ալաշկերտ, Մուշ և այլն) այստեղ են հաստատվել բազմաթիվ գաղթականներ՝ բերելով իրենց բնաշխարհի ժողովրդական հավատալիքային տարրեր: Ներգաղթից տարիներ անց տարեց մարդիկ շարունակ հիշում էին էրգրում թողած զորավոր օթևանները, որոնք խորհրդակիր երբեմն հայտնվում էին երազում՝ հիշեցնելով իրենց գոյության մասին:

Աղ. Մխիթարյանցը «Փշրանքներ Շիրակի ամբարներից» ժողովածուի (Հատոր Ա, 1901) «Հաւատք, ընտանեկան բարք եւ սովորոյթք, կենցաղ եւ զբաղմունքե գլխում անդրադառնում է «Տան սուրբ» ավետարանների անձնավորվածությանը, զորությունների շառավիղին, դրանց բնավայրին ու հեղինակների սակավապետ լինելուն և այլ ուշագրավ երևույթների: Այսպես՝ «Սատանա Սարգսենց Թուխ Մանուկը ջահել տղու պես է. ամեն օր կերթա Բասեն, իրա օթևանը հանդիպի, կուգաե: Կամ՝ Մեր Աղեն-Թուխմանուկն է.... սիրտը օթևանեն չի կտրի:

Տան սրբի անձնավորված կերպարի մասին ուշագրավ է նաև Շիրակի Վահրամաբերդ համայնքից մեր գրի առած հետևյալ պատումը, որը բանասաց Լիլիթ Սարգսյանը (ծնվել է 1997թ. Վահրամաբերդում, նախնիները գաղթել են Մուշից) լսել է տատիկից: «Ամառվա մի խաղաղ օր՝ իրիկունը, կեսարաս տուն էկավ, դուռը փակեց: Ինքը դարբին էր, դռանը խաչէրգաթ էր սարքե, օր ամուր փակվի. ըդորով փակեց, էկավ ներս: Իրա հետեւից դուռը ուժեղ շփոցով բացվավ: Կերսարս ըսեց՝ ես փակեցի, էս ո՞վ դուռը բացեց: Ետ դառավ, տեսնի՝ ո՛վ է: Շեկ, խոշոր, սիրուն մարդըմ դսի դռնից ներս մտավ: Ընձի ըսեց՝ մյուս անգամ դուռը վրես չփակեք:

Կերսարս էկավ, ըսի՝ պապա՛, մե մարդըմ էկավ՝ հագին գենեռալի շոր, ընձի ըսեց՝ դուռը վրես չփակեք: Կերսարս չոքավ, լացավ, ըսեց՝ շե՛կ Ավետարան, մենք քեզի կորցրինք, դու մեզի գտար: Էդ ժամանակ ընձի պատմեց, որ իրանց տոհմը Մուշում Ավետարան է ունեցել: Իրանց գյուղացիք միշտ ըսել են՝ Գևորգենց տան ազատարար շե՛կ Ավետարան, դու մեզի փրկե»:

Հավատավոր հայ ժողովրդի համար ծննդավայրի կարոտը և հայրենի ուխտատեղիների հիշատակը պահելու լավագույն միջոց են Տան սրբերը, որոնք պահվում են հատուկ խնամքով ու երկյուղածությամբ:

Հայ ձեռագրերից շատերն անցել են հրի ու ջրի միջով և ահեղ փորձություններից հետո հասել են մեր օրերը: Այդպիսի ճակատագրի է արժանացել նաև Դիարբեքիրի Օխու գյուղի հրաշագործ ավետարանը՝ Մուրադենց Սբ Ավետարանը, որին հավատացել են նաև այլադավանները՝ քրդերը,1895 թ. հայկական կոտորածների ժամանակ մատյանն ընկել է Մավալի անունով մի քրդի ձեռքը, բայց վերադարձվել է տիրոջը, որովհետև քուրդը վախեցել է երկնային պատժից:

Հնագրական տվյալները 15 կամ 16-րդ դար են հուշում, թեև մատյանում կա մի հիշատակագրություն 1663 թվականից, բայց դա հետագայի գրչություն է:

Քուրդ Մավալիի ձեռքն է ընկնում այս Ավետարանը 2 անգամ, որը մինչև Հալեպ հասնում է, որ հետ գնի այն, սակայն Մելքոն Մուրադյանը չի համաձայնում: Հետո ժառանգում է իր աղջկան: Ի վերջո երկար դեգերումներից հետո 1983թ. ձեռագիրը հայրենադարձվում է և այժմ հանգրվանում է Երևանի Մատենադարանում :

Նույն՝ Օխուի ավետարանի մասին պատմում են, որ այն չի այրվում կրակի բոցերի մեջ, ոչ էլ ջրերի մեջ է սուզվում. անգամ չի թրջվում, մնում է ջրի երեսին: Փորձություններից փրկել է նաև Ավետարանի մոտ վառվող ճրագի համար ձիթայուղ ապահովողներին և այլն:

Մեծ արժեք է ներկայացնում դարձյալ երկար ու չարչարանաց ճանապարհ անցած Հաղպատի ձեռագիր մագաղաթյա Ավետարանը, 13-րդ դարի սկիզբ, Ծաղկոր՝ Մարգարէ: Գրվել է անեցի Սահակ քահանայի պատվերով, որ սովորել էր Հաղպատում: Ավետարանը մանրանկարչության լավագույն նմուշներից է: Այն Հաղպատի վանքում ընդօրինակել են երկու գրիչներ: Նրանցից առաջինի անունը հայտնի չէ, իսկ երկրորդը եղել է Հակոբ անունով գրիչը: Հակոբը, գրելուց բացի, ավետարանը զարդարել է զարդագրերով ու կիսախորաններով, որոնք չի գունազարդել: Հաղպատից ավետարանը տարվել է Անի, որտեղ այն գունազարդվել է: 1223թ. արցախցի Սարգիսը այն գնում է և նվիրում Խաչենի եպիսկոպոսարանին: Դարեր հետո հիշյալ ավետարանը բերվել է էջմիածնի մատենադարան, իսկ հետո Երևանի Մատենադարան: Ավետարանը հանրահայտ է ծաղկող Մարգարեի նկարներով: Այնտեղ նաև բացի հոգևոր տեսարաններից, ներկայացվել է ժամանակի աշխարհիկ կյանքը:

Հանրահայտ գրչագիր ավետարաններից մի քանիսը վկայակոչելուց զատ, գրառել ենք ՀՀ Շիրակի մարզի տարբեր համայնքներում հռչակված Տան սրբերի՝ Բուժիչ, Սքանչելագործ, Ազատարար, Կամակատար ավետարանների ցայսօր էլ կենսունակ պատմություններ:

Այսպես.հայի ճակատագիր ուներ Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղի Ոսկեկող ավետարանը, հայի ոդիսական: Տպագրված լինելով 1732թ. Վենետիկում Մխիթար Սեբաստացի աբբահոր ջանքերով, Աբրահամ Երկրորդ Խոշաբեցի (Բաղիշեցի) կաթողիկոսի հայրապետության շրջանում՝ հասել է Մշո Ալվառինջ, այնտեղից գաղթի ճանապարհով՝ Գյումրի քաղաք, ապա՝ Ոսկեհասկ (փախեփախին Զարեհ-Սերոբի մարմնին է կապած եղել, թուրք զինվորը չախմախը քաշել է, որ կրակի, հրացանը չի կրակել. Ավետարանի զորությունը թույլ չի տվել): 1937թ. Ավետարանը մատնության զոհ չդառնալու համար Սալիմ Անուշը թաքցնում է իր տան պատի մեջ: Խուզարկուները որքան էլ պրպտում, չեն գտնում. ո՛չ սպանդը, ո՛չ դեգերումները, ո՛չ էլ բռնաճնշումները չեն կարողանում նվազեցնել Ավետարանի զորությունը

Անցնում են տարիներ: Ոսկեկող ավետարանը շարունակում էր զորակցել նրանց, ովքեր անվերապահորեն հավատում էին և իր դուռն էին գալիս: Ժամանակի ընթացքում ավելանում էր նրա համբավը: Եկեղեցի կառուցելու գաղափարը և հոր՝ Սարգսի հորդորները հանգիստ չէին տալիս Վարդան Ասատրյանին: 2013թ. վերջերին Վարդանի տղա Սարգիսը երազում տեսնում է, որ համանուն պապի տան տեղում մի շքեղ եկեղեցի կա: Վարդանը վճռում է, որ Ավետարանի տեղում պետք է եկեղեցի կառուցվի: Այդպես էլ եղավ (բանասաց Ռաֆիկ Ավագյան, ծնվել է 1932թ., պապերը գաղթել են Մուշից):

Ուշագրավ է, որ հայոց մեջ հացն ու աստվածային խոսքը նույնարժեք սրբություններ են համարվում: Գիրը ազգի հոգևոր հացն է: Մեր ժողովուրդը Սբ Գիրքն այնքան է պաշտել, որ կարդալիս դրել է ալրմաղի մեջ: Հավատում էին, որ մարդու գոյության տաճարն ալրատունն է, նախ՝ եկեղեցում, ապա այստեղ պիտի խունկ վառել. թոնրատունը ևս սրբազան տուն է:

Հայ ավանդական մշակույթում ունեցած դերով ու նշանակությամբ գիրը եղել և մնում է մայր արժեք: Գրին առնչվող հավատալիքները, որ դարերով ամրագրվել են մեր ժողովրդի պատմամշակութային կյանքում, վկայում են, որ դրանք մշտապես դիտվել են բազմագործառութային նշանակությամբ, պաշտվել որպես Գիր Աստծո նշանակ: Հայերը գիրն ու գիրքն այնքան են պաշտել, որ հասցրել են աստվածության աստիճանի: Հատկանշական է, որ եթե կինը զավակ չէր ունենում, գիրք էին որդեգրում:

Ցայսօր էլ ընտանեկան ավանդական մշակույթի ուշագրավ տարրերից է «Տան սուրբը» իբրև արտերևույթ: Տանն առանձնացված հատուկ անկյունում շուշպաներով (Շիրակում անվանում էին շուշփէք, որ սրբերի մասունքները կամ ավետարանը փաթաթելու շոր է. դրանք հաճախ ասեղնագործված փոքր կամ մեծ թաշկինակներ, ծածկոցներ էին) փաթաթում ու պաճուճանքներով զարդարում էին սրբազնացած գրերն ու մասունքները: Տան սրբերը մեկնաբանվում են նաև իբրև տնային աղոթարաններ:

Տան սուրբն ընդհանրապես սրբազան գործառույթ ունի, օժտված է հրաշագործ, պահպանիչ հատկանիշներով և իր զորությամբ օգնում է բուժելու տարաբնույթ ախտեր՝ լուսնոտություն, դեղնություն, հոգեկան հիվանդություն, հեռու է պահում վերահաս փորձություններից, ակնահարությունից և մտքի պայծառության համար է: Տան սրբից խնդրում էին պաշտպանություն հանկարծահաս նեղության դեպքում, հաջողություն՝ կարևոր գործ սկսելուց առաջ, հավատի անսասանություն, հոգու տրտմության ու սրտնեղության փարատում, ցավերից ապաքինում, սերնդաճ, հողաբերքի առատություն և այլն: «Սուրբ գրքերի մասին պատմությունները բացառիկ հուզիչ են ու տպավորիչ, որոնք վկայում են մեր ժողովրդի առաքինությունների մասին, անուրանալի նվիրվածության նշան են մեր պապերի հանդեպ: Պահում են ծննդավայրի կարոտն ու հայրենի սրբատեղիների հիշատակը»:

Շիրակի մարզի գրեթե բոլոր համայնքներում կան Տան սրբեր, որոնք կոչվում են ավետարանների էական հատկանիշներով ու գործառույթներով՝ Կարմիր Ավետարան, Շեկ Ավետարան, Ոսկեհասկի Ոսկեկող Ավետարան, Սարալանջի Քամի Ավետարան (բուժում է կարմիր քամի հիվանդությունը), Ծաղկի Ավետարանը, Կամո գյուղում հայտնի էին Իրիցու Ավետարանը, Շահենի չարխափան Ավետարանը, Հռգա Ավետարանը, Դրմե Ավետարանը, Մշեցու Ավետարանը, Հացիկում՝ Չալապ պապի Ավետարանը (այս Սբ Գիրքը հանգրվանել է տնից դուրս կառուցված մատուռում, որ առտնին կյանքի խոսակցությունները չխաթարեին սրբի զորությունը), Լանջիկ գյուղում՝ Սբ Զայրաթ Ավետարանը, Կենաց խաչը (տունը կառուցել են խաչի գտնվելու վայրում): Առանձնանում էին երազում տեսած կամ երազում իրենց տեղը հայտնած սրբերը՝ Սառնաղբյուրի Մանուկ Ավետարանը, Կարմիր Ավետարանը, Սքանչելագործը:

Սուրբ գրքերի փաղանգի մեջ պաշտամունքի ուշագրավ մի պատում է Հայկավան գյուղի Բայո մամի կամ Սբ Խաչ (Ղլիջ) հրաշագործ Ավետարանը: Գիրքը, ցավ ի սիրտ, չկա, բայց կա պատմությունը, և գյուղի եկեղեցին, որ կոչվում է Սբ Խաչ ավետարան, կառուցել են գրքի պատմության վրա: Տարոնի Մշո գավառի հայտնի Արկավանք գյուղից էր Բայազ Մելքոնյանը, որի շնորհիվ էլ փրկվել է Մշո Կարապետ վանքին պատկանած այդ մասունքը: Բայո մամը պատմել է, որ եղել է երկու ավետարան՝ շեկ ու սև՝ քույր ու եղբայր: ,Տատրակն ամեն տարի եկել, չոքել է մեր դռանը ու մնացել է էնքան, մինչև Սուրբ գիրքը դուրս բերեին ու մատաղ էնեին: Մինչև մատաղ չէնեին, տատրակը չէր հեռանաե:

Բայոյի թոռնուհին (բանասաց Սիրվարդ Մելքոնյանը, 76 տարեկան) պատմում է, որ հիմա էլ ամեն գարնան առաջին արագիլն է գալիս նստում եկեղեցու խաչին (եկեղեցին կառուցել են հայկավանցի երկու եղբայրներ 2008 թ.: Նրանցից մեկը հավատի զորությամբ զավակ է ունեցել հենց եկեղեցու բացման օրը): Այս ավե-

տարանի զորությամբ կառուցված եկեղեցում ուխտի են գալիս ընդգծված մուրազ ունեցողները:

«Գիրքը շատ զորավոր է եղել. անզավակներին երեխա է պարգևել, հիվանդների է բուժել: Տատիկիս հին տանը, որտեղ գտնվում էր Ավետարանը, հիվանդները եկել, բուժվել են, ամենաշատը վախեցածների է բուժել: Տատս իր զորությունը փոխանցեց ինձ, ասաց՝ պիտի շարունակես մարդկանց բժշկել. իր 12 թոռների մեջ միակ աղջիկը ես եմ:

Ինքը գրագիտություն չուներ, բայց յուրահատուկ բուժում էր անում. քարը տաքացնում էր մոմով, դաղում ու դնում էր մարմնի ցավոտ մասերին, պարտադիր դիմում էր Ղլիջ Ավետարանին ու խնդրում բժշկել հիվանդին: Ասում էր. «Ավետարա՛ն ջան, մեծ տանջանքներով ես էկել հասել մեզ, մի՛ թող էս մարդուն տանջանքի մեջ»:

Ի դեպ, Բայո մամի ավետարանի մասին սյուժետային տարբեր հարակցումներ կան, թեև բովանդակային միջուկը կարծր է ու անփոփոխ՝ հավատն առ Սուրբ գիրքն ու աստվածային խոսքը:

Գրքի հմայական զորության ուշագրավ մի պատում էլ գրի ենք առել Արթիկի տարածաշրջանի Պեմզաշեն համայնքում բանասաց Շուրա Հակոբի Հովհաննիսյանից, 83 տարեկան: Նա պատմում է, որ իր պապը գաղթել է Արևմտյան Հայաստանի Մշո գավառից. տոհմն ունեցել է Ոսկեկող ավետարան, փախեփախին կճուճներով ոսկեղենը թողել է այնտեղ՝ պահել է դաշտում ու իր հետ բերել է տան Սուրբ Գիրքը՝ Ավետարանը: 1942 թ. գիրքը տարել են Էջմիածին, այնուհետև՝ Երևանի Մատենադարան: Պատմում է նաև, որ իրենց տոհմի բոլոր տղամարդկանց Սբ Գրքի զորությամբ տրվել է աստվածային շնորհ՝ էրեխեքի բուժում կոխ հիվանդության կամ թուլության դեպքում. «3 անգամ 3 օր կոխ էրեխուն կլողացնեմ. բուժողը ձեռքերս են ու ջուրը: Ջուրը կլցնեմ էրեխի գլխուն, երեսին, ոտքերին: Եթե հեռու տեղ են բնակվում ու չեն կարողանում երեխային բերել, ձեռքերս լվանում եմ, ջուրը լցնում շշի մեջ: Շշալցած ջուրը տանում, խառնում են իրենց տանը հոսող ջրին ու երկու օր էլ իրենց տանն են լողացնում. նույն բուժումն է լինում: Մայրս պատմում էր, որ մեծ, ծանր գիրք էր՝ տառերը ոսկու նման փայլուն: Մեր շեմը հայտնի է պապիս տրված «Բոց ու կրակ» մականունով:

Սբ Գիրքը տարել են տնից, բայց գրքի շնորհը մնացել է մեր շեմին. շեմն անցնողը բուժված է»:

Սովորաբար Տան սրբին նվիրատվություններ էին անում, հաճախ՝ զոհաբերության ընծա, քանի որ հավատում էին նրա մուրազատու լինելուն: Եթե փոխում էին Սրբի տեղը, անպայման մատաղ էին անում՝ սիրաշահելով նրան:

«Տան սուրբ» աղոթատեղին պարբերաբար վերանորոգում են: Հավատավորների ու անեղծ հոգիների համար երբեմն սրբի ձայնը լսելի է տան մեջ. հավատում են, որ նա կարգավորում է մարդու ներաշխարհը: Սուրբը կարող է նեղանալ, բարկանալ, երբ խախտվում են արգելքները /տաբուները/: Հայ հավատալիքային կենցաղում կան հմայական կամ մոգական որոշակի արգելքներ, զորօրինակ՝ «Տան սուրբը» չտեղափոխել, չհանձնել օտար մարդու ձեռք, չթերթել, չլուսանկարել. հիշյալ մոգարգելքներով թերևս փորձում են պահպանել սրբավայրի տարածքի գաղտնագիրը: Նարեկը տանում էին միայն ծանր հիվանդի մոտ կամ երկունքի ժամանակ դնում ծննդկանի բարձի տակ՝ ի թեթևացումն նրա ցավերի:

Որպես կանոն՝ «Տան սուրբ» երևույթին առնչվող ավանդական բանավոր զրույցներում գերակա է բարությամբ, գթասրտությամբ լի, լուսապսակ ունեցող հրաշագործի մոտիվը:

Գրքի հմայական զորության ուշագրավ վկայություն է նաև Շիրակի մարզի Հացիկ գյուղի Չալապ պապի ավետարանը, որ գրվել է 1500-ական թվականներին: 1828թ. ձեռագիր այս մատյանը բերվել է Բասենից քահանա Տեր-Մինասյանի ձեռամբ: Առաջին երկու թերթերը մագաղաթյա են: Գրքի կազմը չալ է, դրա համար էլ կոչել են Չալապ: Սբ Գիրքը բազմիցս փորձությունների է ենթարկվել, մի քանի անգամ գողացել են, բայց ամեն անգամ, երկյուղելով սրբի բարկությունից, վերադարձրել են իր նախկին օթևանը: Հնագույն այս Ավետարանն այժմ գտնվում է Հացիկ գյուղի մատուռում՝ ի պահպանություն ողջ համայնքի (բանասաց Գառնիկ Սարգսյան, ծնվ. 1961 թ., նախնիները գաղթել են Բասենից):

Հրաշագործ մոտիվներով հարակցված պատմություն կա նաև Ջրաձորի՝ զավակ պարգևող Սրբի սարի ու կրակի բոցերի մեջ չայրված Սբ Նարեկի մասին: Ջրաձորցիների պատմելով՝ գյուղի տներից մեկի Նարեկը բերել են Արևմտյան Հայաստանից՝ Բասենից, տերը «մեջքին է կապել, որ սուրբ գիրքն իրեն պահապան լինի. ցերեկը քարանձավներում են պատսպարվել, բայց հետո տղան թաքնվել է բուլուլի՝ խոտի փոքր դեզի մեջ: Նարեկն իրեն իրոք պահպանել է, իր հետ եկողները մահացել են, իսկ ինքը փրկվել է: Երբ թուրքերը ճանապարհին բռնել են, ուզել են սուրբ գիրքը վառել, գցել են կրակի բոցերի մեջ, գիրքը չի այրվել, կրակի միջից դուրս է թռել»,-պատմում էին գյուղացիները:

Շիրակի մարզում Տան սրբերի զորության մասին զրույցների դիպաշարերը, հրաշագործ հարակցումներ ունենալով, վկայում են մեր ժողովրդի գրապաշտությունն ու հավատավոր լինելը, նրա բացառիկ ոգեղենությունը:

Այսօր էլ կենսունակ է գրի ու գրքի պաշտամունքը, քանի որ ընտանեկան հավատալիքային մշակույթի անտրոհելի մաս է և իր գործառույթով ձեռք է բերել հասարակական մեծ հնչողություն:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ
Հոգ. գիտ. թեկնածու



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՈՒՅԵ ԵՍ ԷԼ ԿԱՄ

Իմ թևերի մեջ
Քնիր դու հանգիստ,
Քնիր, սիրելիս,
Քո սիրո մաքուր ու հեքիաթային
Երազների հետ,
Իսկ ես չունեմ քուն.
Ես ամբողջ գիշեր
Կհսկեմ թաքուն:
Քնիր դու հանգիստ
Քո անուշ քնով
Ու զարթնիր պայծառ
Արշալույսի հետ
Առավոտ ծեգին,
Թող արևը քեզ
Դառնա բարեկամ
Ու պատմիր դու ինձ
Երազդ մաքուր:
Քո երազի մեջ
Գուցե ես ել կամ…

ԱՆՀԱՅՏ ՁԻՆՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Տասը հազար ու մի վարդեր եմ փնջել,
Տխուր բարձրացել սուրբ եեռաբլուր,
Զույգ-զույգ վարդեր եմ աղոթքով փռել
Մահարձաններին խնկահոտ ու լուռ:
Տասը հազար աչքեր նայում են հպարտ,
Ժպտում են անխոս շիրմաքարերից,
Փնտրում, չեմ գտնում հարազատ որդուս
Ախր չի դարձել նա պատերազմից:
Հարցնում եմ- Տղերք, չե՞ք տեսել որդուս:
Քարերը լուռ են, ոչինչ չեն ասում,
Վերջին մեկ վարդը սեղմած քար կրծքիս
Ամեն օր անլուր ես տուն եմ դառնում,
Խամրած աչքերս էլ արցունք չունեն
Սակայն հույս ունեմ կգա որդիս քաջ,
Ամեն օր մի նոր վարդ եմ խոնարհում
Միևուճար որդուս նկարի առաջ:

ԼՈՒՅՍԸ ՀՈԳԻ ՏԱԿ

Չորս կողմս լույս է,
Հոգուս մեջ՝ խավար,
Դու լույսս էիր, մա՛յր,
Իմ բաժին լույսը
Դու քեզ հետ տարար:

Լուռ մտածում եմ,
Խորհում՝ անդադար,
Թե լույսն ինչպե՞ս է
Ապրում հողի տակ՝
Խոնավ ու խավար:

ՄԻ ԱՅԼ ՀԱՆԱՊԱՐՀ

Իմ ցավի նման աշխարհում չկա,
Դու ինձ մոտ եկար ուրիշ աշխարհից,
Այնքան ցավոտ է, այնքան խորն է այն,
Որ հազար անգամ ծանր է մահից:

Հոգիս այրվում է թեժ կրակներից,
Բոցը հասել է ուրիշ մի աշխարհ,
Այս աշխարհի մեջ ինձ չեմ ճանաչում՝
Հնազանդ ռմ ես ու այնքան խոնարհ:

Այրումից հետո մոխիր է մնում.
Քո կրակներից մոխրացավ հոգիս,
Բայց նույնիսկ մոխիր չկա սրտիս մեջ
Մաքրել ես, տարել մոխիրը սրտիս:

Դատարկություն է իմ ներսում հիմա,
Հոգուս մեջ՝ մռայլ մի ուրիշ աշխարհ,
Կործանվում եմ այս օտար աշխարհում,
Փնտրում եմ ելքի մի այլ ճանապարհ:

***

Հագել է նորից բաճկոնը կանաչ,
Փամփուշտակալը ու կաշվե գոտին,
Այնքան հպարտ է, այնքան անճանաչ,
Նորից կռիվ է գնում իմ որդին,
Մոր դրած հացից մի պատառ կտրեց,
Հողն ու սահմանն են հեռվում սպասում,
Վերջում քաջ տղոնց կենացը խմեց:

Ախր նոր եկավ, գնում է արդեն,
Դարձյալ ասում է ինձ՝ մնաս բարով,
Ուրախ ասում եմ՝ քեզ բարի ճամփա,
Բայց գլխիս կարծես խփում են քարով:
Ծով արցունքներս պահում եմ թաքուն,
Աչքիս փոխարեն հոգիս է լացում,
Երբ որ ասում է նա՝ մնաս բարով,
Երբ որ գնալուց տան դուռն է բացում:

Ու էլ չեն փակվում աչքերս ու դուռը,
Որ նա չփորձի փակ դուռը թակել,
Երբ նորից դառնա՝ բաց գտնի դուռը,
Ու ես էլ կասեմ՝ բարո՛վ ես եկել:

Հիմա տալիս եմ հազար երանի
Այն օրվան, որ նա հաղթած տուն կգա,
Փամփուշտակալն ու գոտին կհանի
Ու կասի՝ հայրիկ, էլ կռիվ չկա:

ԱՐԵՎՍ ՄԵՌԱՎ

Ցերեկվա կեսին արևս կորավ,
Լույսի փոխարեն սև մութն ինձ գրկեց,
Գիշերը իջավ նստեց քո սրտին,
Իր սև շղարշով սիրտս պարուրեց:

Արտասվեց հոգիս մթության մեջ խոր,
Երկունքի պահին երգս ցնորվեց,
Մղձավանջ տեսա գիշերվա կեսին.
Արևը մեռավ և մութն ինձ գրկեց:

Հավերժ գիշեր է իմ կյանքում հիմա,
Արև չեմ տեսնում նույնիսկ երազում,
Իսկ մութը հպարտ կանգնել է ճամփիս՝
Չգիտեմ՝ գլխիս ինչ է քարոզում…

ԹՈՂՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Ինձ ապակին է քեզնից բաժանում,
Անգութ ապակին քո լուսամուտի,
Երբ սերը հոգուդ խորքն է մտնում՝
Կորցնում ես անգամ չափը ամոթի:

Ուզում եմ ջարդել ես այդ ապակին,
Թող որ մերկ մնա լուսամուտը քո,
Որ քո պատկերը ես մաքուր տեսնեմ
Պայծառ աստղերի լույսերի ներքո:

Թող որ չորանա ծառը ձեր այգու,
Ճյուղերն են փակել աչքերիս ճամփան,
Ոչ մի խոչընդոտ ես չեմ հանդուրժի,
Գոնե քեզ հեռվից տեսնեմ անխափան:

Բայց, միևնույնն է, մի արգելք միշտ կա
Հարդագողի մութ ճամփաների պես,
Իսկ սիրող սրտիս ի՞նչ պատասխան տա.
Այս դժվար հարցն էլ ես կթողնեմ քեզ:

ՄԻ ՊԱՀԻՐ ՍԵՐԸ ԹԱՔՈՒՆ

Մի ամաչիր սիրել, եթե սիրտդ է սիրում,
Դու մի փորձիր սերը պահել թաքուն,
Թող նա ազատ պարի,
մի՛ վանդակիր նրան,
Սերը շատ է սիրում ազատություն:

Սերն էլ իր կյանքն ունի՝ ծնունդ ու մահ,
Մեկ բժիշկ է սերը, մեկ էլ՝ դահիճ,
Սրտից ծնված սերը շատ նման է մանկան-
Դեռ նոր մորից ծնված հանում է ճիչ:

Լույս, արև է սիրում սերը՝ ծաղկի նման,
Ունի խոչընդոտներ, ունի հոգս ու կարիք,
Սերն ունակ է բացել հազար փակ ու փականք,
Չի ճանաչում սերը ազգ ու տարիք:

Սերը չունի գիշեր, նա չի քնում երբեք,
Սերը ապրում է միշտ,
չի մահանում,
Մի դադարիր սիրել, թեկուզ հեռու է այն,
Սերը հեռանում է, բայց միշտ վերադառնում:



Գործ՝ Սարգիս Համբարձումյանի

ԴԱՎԻԹ ԱՐԱՄ ԴՈՆԱԲԵԴՅԱՆ

Դավիթ Արամ Դոնաբեդյանը ծնվել է Բոստոնում 1959 թվականին և ապրում է Նյու Հեմփշիրի Մոնատնոք լեռան ստորոտին: Նա գրող է և նկարիչ: 2002 թվականին նա առաջին անգամ եղել է Հայաստանում և պարբերաբար վերադառնում է հայրենիք: Նրա ստեղծագործությունը հայ ընթերցողին ծանոթ է «Արտասահմանյան գրականություն», «Ակտիվ արվեստ» պարբերականներից և «Եղեգան փող» գրական թերթից, «Գյումրվա գրականություն» կայքից:

Դոնաբեդյանի գործերը տպագրվել են նաև Ամերիկայում գործող Հայկական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ասոցիացիայի կողմից հրատարակված «Հայկական ուսումնասիրություններ» ամսագրում և «Transcript» եվրոպական առցանց գրական ակնարկի հատուկ հայերեն համարում: Գրում է անգլերեն:

Ձեզ ենք ներկայացնում «Քվազիմոդո կիրակին» ժողովածուն լրացնող վերջին ութ բանաստեղծությունները և հեղինակի գեղանկարչական գործերից:

ՁԻԿԿՈՒՐԱՏ

Պատկերացրեք կենսաբանական համակարգիչ, որ գործում է կենդանի բջջի ներսում:

Դոկտ. Էնդրյու Ֆիլիպս, 2019

Գրաֆենն
ինքնահավաքվում է,
անշուշտ:
Հարվածն զգացի՝
ներերակային՝ մեկեն:
Մանողները մանում են
թունավոր թելեր:
Մագնիսական հարավ,
Կարանտին մահիճ:
Ո՞վ է սիրում արև,

Ձիկկուրա՞տ, թե՞ ինչ:
Աստիճա՞ն ոսկե,
թե՞ ժանգոտ մի բան:
Ատելություն: Անձրևը՝
«ղսմաթ» կրակին:

Կիսադևի հոգեկոչ կիսադեմ,
առկայծ ճառագայթ՝ նյարդային
ցանցում:

«Ի՞նչ ասել է դա».
Ասաց: Ու վարգեց
հեռու:
Հետ կպահեմ քեզ,
թե կարողանամ:

Սա ո՛չ գազան է,
ո՛չ էլ մարդ է սա:

Գթության քույրը
պատրաստում է քեզ
Հուշիկ՝ գիշերվան.
ասեղը խփում,
ճրագդ՝ մարում…

ԹԱՓՈՐ

Ձուրը սևանում է,
մանրաձուկն ի մեջ
մակընթացության:

Գիշերվա ճամփեն բռնած՝
Նավարկում ենք դեպի տուն:

Դադար Հարվիչում,
կոնծել մինչև լուսաբաց –

«Բացի դավաճանից»,
որ մարզվեց քաղաքում:
Նրան՝ բարձրաստիճան
ապաստանյալին ու ջրասույզին:

Գահի զգեստներով,
նրբագեղ հագուստ:

Ներկված և զգեստավոր,
Հանդիսության արքաներ:

Լուսինը ժայռի դեմքին,
բոլորվեց և հարձակվեց:

Սիրտը՝ մոմավառ:
Կրակյալ աղաղակ:

ԿԱԹՆԱՔԱՐ

Մենք նետերի ծայրեր էինք գտնում
դաշտերում: Հազարավոր
ոսկորներ:
Գանձ: Թե ի՛նչ մնաց Թագավորից,
Չեմ կարող ասել: Առասպե՞լ:

Ժանտախտն ու նախաբանտ՝
նույնպես:
Կուզե՞ք, անվանեք «պեղում»
Քաղաքի ընդգետնյա:
Ճիշտ կլինի՞ արդյոք:
Ինչ կարդացել էի, հեռացրել են:

Ավագ Քահանան մարգարեացավ
չորրորդ ամսվա երրորդ օրը.
Այս քարից
կաթ է ժայթքելու-
Քիչ էլ՝ քեզ համար,
Ֆոնային աղմուկ.
Լուրեր կարևոր:

ՁԱՅՆԵՐ ՄԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իր բոլոր անհասկանալի խոսքերին ես պատասխանեցի միայն մեկ բան.
«Վերբանա ատ» (տո՛ւր ինձ ձի):
Ալ. Պուշկին, «Ճանապարհորդություն դեպի էրզրում»

Ոչ վերամբարձ շքեղություն և զանգեր:
Հասկացի՛ր ինձ… Հարվածային
ուժ, Գրավական,
Հայրենիք, Հավատք: Ընկերս, դեռ
մտահո՞գ չես:
Կրկին: Որսի մի լավ հավք, ինչ-որ
մեկը սա
խաղաղություն է կոչում: Փուչիկ և
թղթե բաժակ:
Ստրուկ լինի թե հիփ շքերթ-
Հռենոսյան գինի գտնելու համար:

«Depuis un mois, je suis aux fers».
Քոնն ու իմը:
Եվ դո՞ւ, և ե՞ս: - Կոմունիստ:
Սուբվերսիվ
(Խռովության ակտ,
Օտարերկրացիների
և Լրտեսական ակտեր…)

Արյուն և հող:
Ա՜հ, այս փողոցներում քաղցրավենիքի ու մորթված եղջյուրի մեջ,
սրբեր և գողեր. Կտրենք երակը:
Մահապատիժներ՝ խաղարկային,

Հեքիաթային արշավներ.
Ձգանից արձակված ալիքն
ուխտի ճանապարհը բռնեց:
Նա ճանապարհ ընկավ էյդինից.
- Բազե՛, բազե՛, ես Ծովակատու
վեցն եմ:
Ձեր անօդաչուն հակառակորդն է
կառավարում:

Արդեն: Հնչեցրե՛ք գալարափողը:
Դուք, հարցված պարոն, ստույգ,
վստահ: Ես էլ աչքս ջուր կտրած
սպասե՞մ՝ սև ջրերի վրա:
- Գտի՛ր Ալադինի դարպասը:
«Վի՛զ դիր» լամպը նրա:

Թող լինի կիսահանճար, ուրեմն
բարձրացրու սո՛ւրդ
Տերունական…
չգիտեմ էլ՝ ի՛նչ հնարքով նրան
Տեր կոչել:
Բոլոր ջնջվածներին - Անհայտ:
Եղնիկներին՝ խփված ու անտեր
թողնված,

Սպառնալիքներ: Ոլորապտույտ
անցք՝ անտեսանելի խլուրդի…
Անդիմադրելի հետիարված:
Կոնագլուխ՝ անհաղթահարելի:
Երկրի խավար միջուկ: Մոլո՛ր–
տասը հազար դուրսպրծո՛ւկ:

- Պարի՛ր և զլի՛ր պարկապզուկդ՝
դժոխքի ինն աշխարհների
համար:
Դիտարկենք սև օպերացիան,
կասկածի այսօրվա համար
միանվագ վճարված է՝
շղթաներով:
Դատավորը վիճակ նետեց մետաղադրամով և ասաց.
- Շատ պետքս էր գրպանի
այս մանրը:

ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԻՆԸ

Անլար զեկույցներ
հետախուզությունից
այս գիշերվա:

Լույսե սանդուղքին
Օձն է ու վարդը:

Դրոշիդ, իմ սեր, մուրճ կամ
խաչվող
Սրեր -

«Ի՞նչ հաճախության վրա ենք
հիմա»:
Ազդանշանն է կլանվում
աղմուկով անտեսանելի:

Առաքելության չտեսնված,
ու չլսված
զանգերն են երկրահայաց հնչում:

Դատարկ քաղաք…
լսելիքն՝ անլուր, իշխող
առնետներ սոսկ՝
հրով որբացյալ:

Անձրև: Երկար ու սև
շղարշ: Ի՞նչը մնաց -
հպա՛րտ լեր -
Լեզուն կտրա՛ծ թռչուն,
անծպտուն:

ՄԻՋԱՆՁՔԻ ԲԼՅՈՒՋ

Ասա՝
ի՛նչ է խորհուրդը պարույրի,

Եվ ի՞նչ է
Սրտի լիցքավորիչ պտույտը:

Պոմպ չէ դա,
թեև կարելի է ասել,
որ քնում է ու երազում:

Եվ ահա
տասնօրյա խավար՝
Ծնունդ. գրեթե կատարյալ է:
Արթնացի՛ր:
Թո՛ղ քո նինջը:

Կենտավրո՛ս,
կանխանշյալ փորձանք՝
Մի՞թե չորս ոտքերի վրա:
Փոշի փչող
շեփոր:

Լսել եմ այդ մասին-
սեղմած լեզուներից:

Փոփոխվող վիճակ:
Ֆոտոնային բյուրեղներ:
Սևը՝ սևի վրա,

Դավադիր շշուկներ,
խռովություն:
Գաղտնիքներ՝ բացահայտված.

Այդտե՞ղ ես:
Ցույց տուր քեզ, Ա՛յ»:

Կանաչ,
այս ծաղկումից առաջ...

Վառված ջահ՝
Արևի հետագծով,
լույսի շրջան՝
ընթացքը պահող:
(Ֆինի. Նադա)
Կորսիկայում,
միջանցքում,
զույգ դռների միջև:

ՈՒՂԻՂ՝ ՊՈՐՏԱԼԱՐՈՎ

Մայրն ընկավ:
Նրա հետևում
մորթու այս զանգվածն է
անտեսանելիորեն աճում:

Վերադարձի ճանապարհն
իմացողները կորցրին այն:

«Ոչինչ մի՛ ասա: Հանգի՛ստ մնա:
Առա՛ջ շարժվիր,
և մի՛ խոսիր տեսուչ Բլիքի հետ,
թե հույս ունես արթնանալու
կրկին»:

Մեծ մարդն ընտրում է Սոդոմի
4:05-ի գնացքը՝
Հուդզոնի երթուղին:
Երգչախումբը հարթակին՝
Հրեշտակաց հառաչանացն
հրավիրեալ:

Գիտակցի՛ր այդ. դրա լույսը
տրանս է մակածում:
Ցուրտ: Պտղի սրտի բաբախը
հաճախակիացել է
Ծննդաբերությունից հետո,
հեմոռագիկ
սրտի կանգով:
Անհաջողակ, հետնապահ:

Գիլիոտին անիվներով.
Հե՜յ, ժամանակն է
Պարզ ապրանքափոխանակության
աղոթքների միջև -
ուղիղ՝ պորտալարով:

ՎԵՐԻՃ ՎԱՐ

I

Մեծ պահքի ընթացքում
հին աստվածները կարկանդակներ են
ուտում:
Ոմանք ասում են՝ ծոմ են պահում,
սակայն ինձ փաստեր են
հարկավոր,
զրոներ և մեկեր,
նանոմասշտաբ բոտեր՝
տեխնետրոնիկ ու հավաստի:
Յուպիտերի, Ապոլոնի հանդեպ
հաղթանակի մեջ.
չեմ ժխտի՝
մի քիչ հետ ընկանք կարծես:

Պատրաստեցինք բարձեր
ու երազանք:
Ուրախ-ուրախ
անցնում ենք շեմը:
Պետք է հասկանաս
այս հին դդյակը.

Չոր ոսկորներ՝ մետաքսե
հագուստով,
Քայլի՛ր գիշերը: Օ՜,
Քայլ գցել, թուլանալ,
բարձրանալ:
Փխրուն ճաղավանդակ՝
մթության մեջ,
չամրացված կամ բացակայող
սանդուղք.
հայտնի դավադիրն է,
այնպես չէ՞:

II

Արհեստանոցում,
էլֆերի տաշած
անդրոիդ աղջիկն է:

Երեք օբյեկտ
միաձուլվում են:
Վագոններն են այրվում
ձորում:

Ամայություն
նավահանգիստներում:
Նավերը հետ
չեկան: Սև
ամպեր են գալարվում:

Անհայտ,
Չտեսնված
Համալրումները:

Ավելի մեռյալ, քան
երկինքը,
Տեսադաշտից չքված
եղջերուներ:
Ի՞նչ պատահեց,
Սանտա՛:

Բեռներ երկաթգծին…
Սահնակի զանգն ու
գլխարկը:

Անգլերենից թարգմանեց
Հաբեթ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

ՉԻՊՈԼԻՆՈՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Լսել էի, որ Գյումրիում ստեղծվել է մի նոր՝ «Մտորումների թատրոն»: Մի՞թե պարզ չէ, որ մտորելու սովոր և մտորելուց հաճույք ստացողի համար սա ձգողական ուժ կներկայացնի: Համացանցում կարդացել էի առինքնող խաղացանկը ու ինքս ինձ խոստացել… «Հենց Գյումրի ընկնեմ, գնալու եմ այդ թատրոն, որի պատին ծիծաղ առաջացնող ծուռտիկ տառերով գրված է. «Ծօ՛, արի թատրոն»: Չգիտեի, որ դա ձմռանն է լինելու, երբ մեր որոշ արվեստամոլ բջիջներ արջաքուն են մտնում: Ու չէի էլ պատկերացնում, որ փոքրիկ Մայայիս հետ հենց էնպես Գյումրիի փողոցով քայլելիս քիթ քթի հանդիպելու ենք «Մտորումների թատրոնին», որտեղ այդ օրը Մայայի բախտից ուղիղ մեկ ժամ հետո ներկայացում կար և այն էլ՝ «Չիպոլինոյի արկածները»:

Երբ արդեն նստած էինք փոքրիկ դահլիճում ու համբերությամբ սպասում էինք գունագեղ վարագույրի բացվելուն, Մայան սկսեց իր հարցերի տարափը. «Իսկ էս մասո՞ւմ ինչ են անելու»: Նկատի ուներ բեմի ու դահլիճի միջև ընկած տարածքը: «Ոչ մի բան»,- մեծավարի՝ իբր պատասխանեցի:

Մեր համբերությունը բավարար էր, քանի որ բեմը գեղեցիկ էր, երաժշտությունը՝ լավ սպասումով համակող: Եվ երրորդ զանգից հետո հանկարծ բեմի ու դահլիճի միջև ընկած տարածքը լցվեց փոքրիկ հեքիաթասաց աղջիկների խմբով. միանգամից վերացավ դահլիճի ու բեմի անջրպետը, ընկալեցինք՝ ինչ-որ առումով դառնում ենք խաղի մասնակիցներ: Պետք էր լսել Մայայի ուրախության ճիչերը, երբ փոքրիկ դերակատարները շատ էին մոտենում մեզ:

Անկախ բեմական պայմանականություններից, Մայան անմիջապես ընդունեց փոքրիկ տղային՝ որպես սոխուկ Չիպոլինո, ճանաչեց Քավոր Դդումին և Պրոֆեսոր Տանձին, ու նոր էր հարցրել. «Բա ո՞ւր է Սինյոր Պոմիդորը», երբ եկավ կարմրազգեստ, կարմրագլուխ ու կարմրագլխարկ սինյոր Պոմիդորը, արդեն «բեմում» էին Կոմսուհի Բալերը, փոքրիկ որբուկ Բալը, որ շատ էր ուզում դառնալ Չիպոլինոյի խաղընկերը, ուրախանալ նրա պես…

Իմ սիրտը սկսել էր թրթռալ այնպես, ինչպես լինում է միշտ, երբ անսպասելի հայտնվում ես արվեստի կախարդական դաշտերում… Երևի ճիշտ Մայայի պես, երևի ճիշտ այնպես, ինչպես գեղեցիկի համար աշխարհ եկած մարդը կյանքում առաջին անգամ բռնկվում է նրա կրակով ու ոչ թե այրվում, մոխրանում, այլ թրծված, ոգևորված ոտք է դնում մի նոր ծննդավայր, որի համար արժեր աշխարհ գալ, ապրեցի թատրոնի հրաշքը…

Այս կախարդ քեռուն, որ մեկ ժամ առաջ 19-րդ դարից եկած ծանր դուռը մեր առաջ բացողն էր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Հովհաննես Հովհաննիսյանին, հաջողվել էր, այն էլ ո՜նց էր հաջողվել, ութից մինչև տասնչորս տարեկան տաղանդավոր երեխաների ու ընդամենը մեկ-երկու «մեծիկների» ուժերով բեմադրել մոլորակի բոլոր թատրոններով շրջած Չիպոլինոյին ու նրա բարեկամներին հայացնել: Չի սազում ասել՝ բեմական սուղ միջոցներով, քանի որ այս բառերը տվյալ դպքում իմաստ չունեն: Շատ ենք տեսել ճոխությունից տռզած, փայլերով կուրացնող, ձայնային «հզոր» տեխնիկաներով խլացնող ներկայացումներ, որոնցից ուզում ես ժամ առաջ փախչել: Ու չգիտես, թե քո ձեռքից բռնած, ներկայացման եկած փոքրիկը իր հետ ի՞նչ է տանում տուն, ի՞նչ հոգեկան վնասվածք, գուցեև՝ չգիտակցված մեկընդմիշտ հրաժարում «արվեստից»:

Ոչ թե դժվարանում եմ ասել, թե ի՞նչն էր ինձ այդպես մագնիսացրել, մոռացրել, որ արդեն վաղուց տատիկ եմ, որ շատ թատրոններում եմ եղել աշխարհում, որ ինքս հեքիաթներ հորինող եմ նաև, այլ չեմ ուզում տրոհվել, առանձնանալ այն կախարդանքից, որ ապրեցի այդ րոպեների ընթացքում:

Ներկայացումից հետո, երբ դեռ ուշքի չէի եկել, դուրս չէի եկել շոկից, անպայման ուզում էի նորից տեսնել այն կախարդ քեռուն, որ կարողացել է երեխաների հետ այսպես երեխայանալ, նրանց ոչ թե սովորեցնել, այլ ներարկել, ոչ թե բացատրել, այլ արթնացնել նրանց մեջ եղած լույսը, հարցնել նրան… բայց ի՞նչ հարցնել… Երեխաները ո՞նց էին յուրացրել տեքստերը, ո՞նց էին դիմախաղով, շարժուձևերով, պարով ու երգով այդքան ինքնաբուխ ու ճշգրիտ արտահայտում զգացումները, ո՞նց էին հասել այդպիսի ներդաշնակության… Իսկ հումորը… Դե գյումրեցուն էլ ի՜նչ ածական ու մակդիր է պետք այս հարցում… Իսկ լեզո՜ւն, բեմական գեղեցիկ հայերեն խոսքը, որ այնպես անխնա, անիմաստ աղավաղվում է մայրաքաղաքային բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով, իրենց տներում Գյումրվա անուշ բարբառով խոսող երեխաների շուրթերով հնչում էր անվրեպ գեղեցիկ:

Այս գրառումս գրախոսական չստացվեց, բայց մի բան պարզ է ինձ համար, եթե Հովհաննես Հովհաննիսյանը կարողանում է երեխաների հետ, իր ստեղծած մանկական ստուդիայի ուժերով այսպիսի բարձունքի հասնել, ինչե՜ր է անում նա մեծերի՝ պրոֆեսիոնալների հետ… Միայն այն գիտեմ, որ սպասելու եմ այդ ներկայացումներին… գնալու եմ արդեն իսկ մեծ, շատ մեծ վստահությամբ համակված…

Այն էլ ասեմ, որ երբ ներկայացումը վատն է լինում, հիվանդանում եմ: Նրանից է երևի, որ շատ եմ սիրում թատրոնը…

Ալիս
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՐԱՆ

Գյումրու թիվ 45 միջնակարգ դպրոցը հյուրընկալել էր ՀՀ տարբեր տարածաշրջանների 9-ը դպրոցների «Միջմշակութային կապեր» ծրագրի շրջանակներում «ՀՀ ազգային փոքրամասնություններ» խորագրով աշակերտական հանրապետական աշխատարանին մասնակցելու: Բացման խոսքում տնօրեն Ա. Վարդանյանը ներկայացրեց, որ դպրոցն ունի նշանաբան՝ դռներդ լայն բաց, երբ բարեկամն է ներս մտնում, և դպրոցի բարեկամահանրույթը սիրով ու սրտանց է հյուրընկալել: Մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր նախընտրած ազգային փոքրամասնության նիստ ու կացը, կենցաղը, սովորույթները, նաև խոհանոցը: Ուշագրավն այն էր, որ հայ և քուրդ աշակերտները միասին /Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի աշակերտ Դավիթը և Սիփանի միջնակարգ դպրոցի աշակերտ Նուրին/ հանդես եկան զեկուցումով՝ «Քրդական իրականության մշակութային ասպեկտը»:

Աշխատարանի մասնակիցներն էին՝

- Գյումրու թիվ 45 միջնակարգ դպրոց
- Մխիթար Սեբաստացի կրթահամալիր
- Սիփանի միջնակարգ դպրոց
- Ալագյազի շրջանի Ճարճակիսի միջնակարգ դպրոց
- Գյումրու Ակադեմիական վարժարան
- Լանջիկի միջնակարգ դպրոց
- Գուսանագյուղի միջնակարգ դպրոց
- Ախուրյանի Ն. Աղբալյանի անվան ավագ դպրոց
- «Ռուսական աշխարհ» ՀԿ
- էքսոհոգեբան, հոգ. գիտ. թեկն. Կարինե Սահակյանը:

Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ-ում Հունաստանի փոխդեսպան, հյուպատոս էմանուիլ Ասիմակոպուլոսը:

2-րդ մասում համտեսումն էր տարբեր խոհանոցների, որին էլ հաջորդեց աշխատարանի ամփոփումը: Վերջում դպրոցի տնօրեն Ա. Վարդանյանը բոլորին հանձնեց հուշանվերներ՝ որպես օրվա խորհրդանիշ: Միջոցառումը ջերմ էր, սպասված և ստեղծված բարեկամությունը, անխոս, կունենա շարունակություն: Սիրով ձեռքբերված այդ բարեկամության վերարկուն թող տաքացնի ամենքին և յուրաքանչյուրին:

Աստղիկ
ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան
տպարանում
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ